

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Յաջող Ակիզք Պայտրնի Նախագահութեան

Միացեալ Նահանգներու նոր նախագահ Եօ Պայտրն իր նախընտրական խոստումները կեանքի կոչելով կը շարունակէ յաջողութիւններ արձանագրել համաճարակի դէմ պայքարի ու անոր հետ անմիջականօրէն կապուած տնտեսական ծրագիրներու իրագործման ուղղութեամբ: Վերջին օրերուն Պայտրն օրէնսդրական իր մեծագոյն յաղթանակը արձանագրեց երբ Ներկայացուցչներու Տունը եւ ապա Ծերակոյտը վաւերացուցին Ամերիկեան Վերականգնումի Օրինագիծը, որ կը նախատեսէ 1.9 քիլիոն տոլար միութեամբ օժանդակութիւն տրամադրել աղքատ եւ միջին խաւերուն՝ յաղթահարելու համար համաճարակի տնտեսական ու ընկերային հետեւանքները:

Այս ծրագիրով 1400 տոլարի նպաստ պիտի ստանան բոլոր անոնք, որոնց անցեալ տարուայ անհատական եկամուտը 75 հազար տոլարէն նուազ էր (ընտանիքի պարագային 150 հազար տոլար): Փոքր գաւակներ ունեցողները պիտի ստանան յաւելեալ 1400 տոլար՝ իւրաքանչիւր երեխայի համար: Այսպիսով, յառաջիկայ օրերուն միլիոնաւոր Ամերիկացիներ պիտի օգտուին դրամական այս օժանդակութիւններէն: Պայտրնի ընտրական ծրագիրով նախատեսուած 2000 տոլարի առաջին 600 տոլարը արդէն իսկ բաշխուած էր նախկին նախագահ Տանուտ Թրամի պաշտօնավարման վերջին օրերուն:

Ինչ կը վերաբերի անգործութեան նպաստներուն, հաստատուած օրինագիծով այդ նպաստները պիտի երկարաձգուին մինչեւ Սեպտեմբերի 6-ը: Նահանգներու տրամադրած շաբաթական գումարներուն վրայ ֆետերալ կառավարութիւնը պիտի աւելցնէ 300 տոլար եւս:

Օրինագիծը կը ներառէ նաեւ բազմաթիւ ծրագիրներ փոքր գործարարներուն օժանդակելու, տեղական կառավարութիւններուն օգնելու, դպրոցներու վերաբացումը ապահովելու եւ համաճարակի դէմ պայքարելու ուղղութեամբ: Տնտեսագետներու կարծիքով 1.9 քիլիոն տոլարի այս օրինագիծը ամենէն առատաձեռն է Ամերիկայի պատմութեան մէջ եւ մեծապէս պիտի նպաստէ նուազեցնելու երկրէն ներս աղքատութեան մակարդակը եւ խթանելու ամբողջ տնտեսութիւնը:

Ուշագրաւ էր որ, Գոնկրետի երկու Պալատներէն ներս օրինագիծը վաւերացուեցաւ բացառա-

ՕՆՆԻԿ Գասպարեանը Ազատելու Հարցը Կը Գտնուի Վարչապետի Իրաւասութեան Ծիրէն Ներս. Ըսած է Արմէն Սարգսեան

Վարչապետ - Գլխաւոր շտաբի պետ առճակատումը երկու շաբաթէ ի վեր կը շարունակուի՝ այն պահէն երբ զինուորականները Օննիկ Գասպարեանի գլխաւորութեամբ պահանջեցին վարչապետի հրաժարականը:

Յայտարարութիւնը ռազմական լեզուով ման փորձ որակած Փաշինեանը ի պատասխան, Գլխաւոր շտաբի պետի պաշտօնակալութեան գործընթաց սկսաւ: Նախագահը առարկութիւններով վերադարձուց հրամանագրի նախագիծը, սակայն վարչապետը կրկին պնդեց Գասպարեանի պաշտօնակալութեան միջնորդութիւնը: Անկէ յետոյ Արմէն Սարգսեան յայտարարեց, որ չէ ստորագրած, բայց Սահմանադրական Դատարան ալ չէ դիմած: Փոխարէնը խօսեցաւ միանգամայն այլ՝ «Զինուորական ծառայութեան եւ զինճառագողի կարգավիճակի մասին» օրէնքի սահ-

մանադրականութեան հարցով ՄԴ դիմելու մտադրութեան մասին:

Հակառակ որ, այդ յայտարարութեան 5 օր անցած է, ՄԴ-էն Մարտ 9-ին, «Ազատութիւն» ռատիոյային յայտնած են որ, վերջին մէկ շաբաթուայ ընթացքին Հայաստանի Հանրապետութեան նախագահին օրեւէ դիմում չեն ստացած: Իսկ Սահմանադրութիւնը կ'ըսէ՝ եթէ Նախագահը պաշտօնակալութեան հրամանագրերը չստորագրէր, բայց ՄԴ ալ չի դիմեր, համապատասխան աքթը ուժի մէջ կը մտնէ իրաւունքի ուժով:

Մարտ 9-ին հրապարակուեցաւ Փաստաբաններու Պալատին նախագահ Սարգսեանի կողմէ յղուած նամակը, որուն մէջ ըսուած է, «Ներկայումս Օննիկ Գասպարեանին ազատելու հարցը թէ՛ իրաւական ընթացակարգերի, թէ՛

Նիկոլ Փաշինեան Հեռաձայնային Զրոյց Ունեցած է ԱՄՆ-ի Պետական Քարտուղար Անթընի Պլինքընի Հետ



Հայաստանի վարչապետ
Նիկոլ Փաշինեան

ԱՄՆ-ի պետական քարտուղար
Անթընի Պլինքըն

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռաձայնային զրոյց ունեցած է ԱՄՆ-ի պետական քարտուղար՝ Անթընի Պլինքընի հետ:

Նիկոլ Փաշինեան նախ շնորհակատութիւն արտայայտեց իր վարչապետ Փաշինեան բարձր գնահատած է ԱՄՆ-ի կողմէ Հայաստանին տրամադրուող մշտական աջակցութիւնը եւ ԵԱՀԿ Մինսքի խումբէն ներս ԱՄՆ-ի ունեցած դերակատարումը:

«Ազատութեան Տունի» Կարծիքով Պատերազմը Փշրեց Բարեփոխումներու Յոյսերը Հայաստանի Սէջ

Հ ե ղ ի ն ա կ ա լ ո ը
«Ազատութեան Տուն» (Freedom House) իրաւագաշտպան կազմակերպութիւնը՝ աշխարհի ժողովրդավարութեան զարգացման եւ ազատութիւններու մասին իր տարեկան գեղոյցին մէջ գրած է որ, պատերազմի հետեւանքները փշրեցին բարեփոխումներու յոյսերը Հայաստանի մէջ:

Անցեալ տարի Freedom House-ը Հայաստանի մէջ ժողովրդավարացման առումով լուրջ առաջընթաց արձանագրած էր, այս տարի կառուցը կը փորձէ ցոյց տալ, թէ ինչպէս պատերազմը կը վտանգէ ժողովրդավարութիւնը՝ որպէս օրինակ բերելով Հայաստանը, նկարագրելով Ալիեւի ռեժիմի սանձազերծած պատերազմի

«Հայաստան» համահայկական Հիմնադրամի Նիւթական Աջակցութիւնը Պատերազմին Մասնակցած 5564 Արցախցիներու Ընտանիքներուն

«Հայաստան» համահայկական հիմնադրամը կը տեղեկացնէ որ, մնացուած ուշադրութեան եւ հոգածութեան կեդրոնը կը գտնուի Արցախի ու արցախցիներու ընկերային խնդիրները:

«Իր աջակցութեան ծրագրերի շրջանակում Հիմնադրամը միանաւագ ֆինանսական աջակցութիւն կը տրամադրի պատերազմին մասնակցած արցախցի 5564 աշխարհագորայինների ընտանիքներին: Սոցիալական աջակցութեան այս ծրագիրը կ'օգնի առժամանակ հոգալ նրանց ընտանիքների կենսական պահանջները:

«Արցախեան 44 -օրյալ պատերազմի ընթացքում, Պաշտպանութեան բանակի հետ միասին, աշխարհագորը կամաւորական սկզբունքով անձնուիրաբար լծուել է Հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին:

«Ծրագրով Հիմնադրամն ընդհանուր առմամբ աշխարհագորայինների ընտանիքներին կ'յատկացնի 1 մլրդ 112 մլն 800 հազար դրամ (Մօտ 2 միլիոն տոլար 10.) գումար, որը կը փոխանցվի «Արցախփոստ»-ի միջոցով», - ըսուած է Հիմնադրամի հրապարակած վերջին հաղորդագրութեան մէջ:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«Թրքա-ժեխա-Թալանչիական» Պրիմիտիվիզմ

ԷՄՍԱ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Հայաստանում նախընտրական պայքարը մեկնարկել է: Եւ որքան էլ ցաւալի լինի արձանագրել՝ քաղաքական ուժերը յետպատերազմեան միջոցով պատրաստ են օգտագործել վարկանիշի բարձրացման նպատակով:

Պատերազմի պարտութեամբ Հայաստանին հասցուած վնասը, մեր երկրի ներկայի անելիքները ու առաւել եւս՝ ապագայի տեսլական որեւէ քաղաքական ուժ չունի: Բոլորը վարուց արդէն լծուել են «հանդիսատեսին» դուր գալու խնդրի լուծմանը:

Փաշինեանը հասարակական տրամադրութիւնները զգալու, կառավարելու հմտութիւն ունի, որը նրան օգնում է հրապարակին ուղղորդել իր նպատակներին համահունչ: Այսօր փողոց դուրս եկած ընդդիմադիր ուժերը Փաշինեանի հետ այդ հարցում մրցել չեն կարող, առայժմ նրանք չեն կարողանում փաշինեանից առաջ անցնել ու դեռ հարց է՝ կը յաջողուի՞ դա նրանց իրականացնել մօտ ապագայում:

Փաշինեանը չի սպառել քաղաքական գոյատեւման բոլոր հնարաւորութիւնները, անկախ նրանից, թէ ընդդիմադիր գործիչները օրը քանի անգամ կրկնեն այդ նախադասութիւնը: Աւելին՝ ընդդիմադիրները կարող են բացառել, որ առաջիկայ ընտրութիւնների անցկացման դէպքում Փաշինեանն ու իր թիմը կը պարտուեն, իսկ իրենք ջախջախիչ յաղթանակ կը տանեն: Ընդդիմադիրներին ձեռնտու է դա ձեւակերպել այսպէս՝ Փաշինեանը կ'օգտուի վարչապետի լեգիտիմիտի եւ կ'ապահովի անհրաժեշտ ձայներ՝ յաջորդ խորհրդարանում պատկառելի ներկայութիւն ապահովելու համար: Իսկ ե՞րբ չի այդպէս եղել, նոյն այդ ընդդիմադիր ուժերից շատերն էլ, երբ իշխանութեան են եղել՝ նոյն կերպ են վարուել: Այնպէս որ՝ զարմանալ Մարտի 1-ին Հանրապետութեան հրապարակում մարզերից եկած բնակչու-

թեան պահուածքի վրայ, բոլորովին էլ տեղին չէ, նրանցից շատերը վստահաբար նախորդ ուժի հանրահաւաքների «մատովկա» էին, ու որոշները տեսախցիկների առջեւ սիրով խոստովանել են այդ փաստը:

Դրան գումարենք նաեւ այն հանգամանքը, որ Փաշինեանն ունի համակիրների իր բանակը, որոնք թէ այսօր, թէ մէկ ամիս յետոյ, թէ վեց ամիս յետոյ՝ Հայաստանում ինչ էլ կատարուի, Փաշինեանն ինչ անսպասելի յայտարարութիւն էլ անի, որը կարող է վնասել ՀՀ շահին, միեւնոյն է՝ նրանք կը գնան ու կ'ընտրեն Փաշինեանի դեկավարած քաղաքական ուժին:

Այլ է պատկերը ընդդիմադիրների շարքերում: Նրանք երբեք չեն խոստովանի, որ խաղում են Փաշինեանի թելադրած խաղի կանոններով ու օրակարգով: Ամէն ինչ սկսուեց համացանցային պայքարից: Որոշուեց ընդդէմ Փաշինեանի աշխատել նրա իսկ «զէնքով»՝ ազգի հետ համացանցի օգնութեամբ շփուելու-խօսելու գործիքով: Սոցիալական ցանցերն, իհարկէ, հեշտացրել են մեր աօրեան մի շարք աշխատանքային, կազմակերպչական հարցերում, բայց Հայաստանի քաղաքական դիսկուրսի մակարդակի առումով, համացանցը ունեցել է խիստ բացասական ազդեցութիւն: Ուշադրութեան չարժանացած, արեւմտեան տարբեր կազմակերպութիւնների ու դեսպանատների դրամաշնորհներ ստանալու նպատակով դիմած եւ մերժուած, տարբեր արեւմտեան միջազգային կառույցներում ժամանակին աշխատած, բայց վարուց պարտապ մնացածները գտել են ինքնադրսեւորուելու ու փող աշխատելու ձեւը... Սեղմում են Ֆէյսբուքի, կամ ՅուՏիկի «լալի» կոճակը եւ «վոլալա»՝ եթերում են, ազգին խելք են սովորեցնում՝ չմոռանալով հայհոյանքների տեղատարափը՝ հիստերիայի բռնկումներով ու «գողական» լեքսիկոնով «ուզգիրատները» հասարակութեան այս կամ այն հատուածի հետ: Նիկոլ Փաշինեանի

իշխանութեան մնալը համացանցային «փորձագէտ», «քաղաքագէտ», «միջազգայնագէտ» ու «վերլուծաբան» աշխատողների համար, ինչ-որ առումով ձեռնտու է, քանի որ, որքան երկար մնայ Փաշինեանն իշխանութեան դեկին՝ այնքան երկար նրանք «աշխատանք» կ'ունենան, այդքան երկար կ'ապահովուի իրենց բարեկեցիկ կեանքը, նրանք այդքան երկար ժամանակ կ'ունենան՝ լուծելու իրենց բարեկեցիկ կեանքի համար անհրաժեշտ ունեցուածքի ձեռքբերման հարցերը:

Բացի այդ, ինչպէս երեւում է, թէ՛ իշխանութիւնը, թէ՛ ընդդիմութիւնն ունեն իրենց «ֆէյքային» բանակները, հետեւաբար, ունեն իրենց ուրիշ Հայաստանը, այլ իրականութիւնը, եւ դրանով իսկ յայտնուել են իրենց իսկ լարած թակարդում: Երբեմն համացանցային «ճշմարտութիւնները» հակասում են մեր իրականութեան պարզ իրողութիւններին: Այսօր աւելի կարեւոր է այն հարցը, թէ ֆէյսբուքում քաղաքական գործիչ, ընդդիմադիր «ակտիւստ» աշխատողի այս կամ այն հրապարակումը քանի «ժպիտ», «հաւանում», «սրտիկ» ու «ջղայնիկ» ստացաւ, քան՝ քաղաքական այս կամ այն ուժի պահուածքը իր իսկ հրաւիրած հանրահաւաքում: Օրինակ՝ Մարտի 1-ի յիշատակի օրը իշխանութեան հրաւիրած հանրահաւաքը ինչու՞ պէտք է վերածուի պատերազմում գրեթէ յաղթանակած ուժի քայլերի՝ համեմուած գոհունակ ու երջանիկ բացականչութիւններով, «Նիկոլ վարչապետ» վանկարկումներով:

Ինչի՞ն պէտք է նպաստի ընդդիմութիւնը, եթէ պայքարում է ընդդէմ մի իշխանութեան, որը ձախողել է պետութեան գոյատեւման համար կարեւոր ոլորտների գործունեութիւնը: Ընդդիմադիրները պէտք է ապացուցեն, որ իրենք գործող իշխանութիւնից աւելի գիտակ են, աւելի հաւասարակշռուած, աւելի խորքային պատկերացումներ ունեն Հայաստանի շուրջ ընթացող գործընթացների մասին:

Սակայն ընդդիմադիր հարթակում շատերի ելույթները փայլում են պրիմիտիվութեան գերագոյն աստիճանով եւ այսօր Հայաստանի շուրջ ստեղծուած իրադրութեանը բացարձակ անհամարժէք են: Օրինակ, ի՞նչ գնահատական տաս մի քաղաքական ուժին, որի շարքերը ընդդիմութեան հանրահաւաքում այլ առաջնորդների ելույթների ժամանակ վանկարկում են՝ «Ծառուկեան, Ծառուկեան...»: Կամ՝ դեռ քանի՞ տարի ենք ստիպուած լինելու լսել՝ «Ժողովրդի մատից փուշ հանելու» մասին պատրաստակամութիւն յայտնող Ծառուկեանի նոյն տեքստը՝ այն էլ Ղարաբաղեան շարժման օրը հրաւիրուած հանրահաւաքում:

Դաշնակցութեան ներկայացուցիչներն ու որոշ ընդդիմադիրներ որոշել են առաջնորդի իրենց հակաութիւններն իրագործելու ճանապարհին կիրառել «Փաշինեանի մեթոդը». կոկորդից դուրս եկող ձայնի դիպապագոնով բարձունքներ նուաճել: Նրանք էլ գլխի են ընկել, որ կարելի է մրցել նաեւ ձայնային դեցիբելով. ով Նիկոլ Փաշինեանից աւելի ուժեղ գոռա, ուրեմն նրա ասածն աւելի ազդեցիկ է:

Ընդդիմադիր հարթակում տարածաշրջանային զարգացումների, քաղաքական տեքստերի առումով առանձնանում է վազգէն Մանուկեանը, որպէս՝ «հին շկոլայի» գործիչ, որի փորձն առայժմ միայն օգնել է պրիմիտիւ տեքստերով հարթակ բարձրացող ընդդիմադիրների հաւաքներին՝ լրջութիւն հաղորդելու տեսանկիւնից: Բայց

Շար.ը էջ 18

Ներքաղաքական ճգնաժամի Հանգուցալուծման Բանալին

ՅԱԿՈԲ ԲԱԳՍԵԱՆ

Հայաստանի ներքաղաքական իրավիճակի հանգուցալուծման շուրջ քննարկումները շարունակուում են, որոնք իհարկէ մեծաւ մասամբ հանգում են մտքին, որ լաւագոյն կամ առնուազն եղածները մեջ ամենաուսուցիչնալ եւ հանրօգուտ, պետութեան եւ պետականութեան համար առաւել նպաստաւոր հանգուցալուծումը կարող է լինել արտահերթ ընտրութիւնը: Թուում է, որ դա անվիճելի հանգամանք է: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ արտահերթ ընտրութիւնը միջոց է, որը ամենեւին կախարդական փայտիկ չէ: Այսինքն՝ դրա անցկացումն ինքնին չի լուծի որեւէ հարց, եթէ չձեւաւորուի դրա շուրջ հանրային-քաղաքական կոնսենսուս: Այդ մասին խօսել ենք բազմիցս:

Արտահերթ ընտրութիւնը պէտք է դառնայ բոլորի ընտրութիւնը՝ իբրեւ հանգուցալուծման մեխանիզմ, այլպէս այն աշխատող չէ: Անգամ մեծամասնութեան ընտրութիւն լինելու դէպքում այն

աշխատող չէ, որովհետեւ յետոյ հարց է առաջանալու՝ ինչ է անելու մեծամասնութիւնը, եթէ փոքրամասնութիւնը շարունակի մնալ փողոցում եւ վարել ապակայուղացման վրայ խաղաղորդքով քաղաքականութիւն: Իսկ առնուազն դա անելու ռեսուրս այդ փոքրամասնութիւնն ունի: Մեծամասնութիւնն այդ դէպքում կը ստանայ ուժի կիրառման լեգիտիմ իրաւունք, բայց դա էլ չի լուծելու հարց, այստեղ չի կարող լինել որեւէ կասկած:

Ըստ այդմ՝ գլխաւոր հարցն այն է, թէ ինչպէս բերել ներքաղաքական դիմակայութեան կողմերին արտահերթ ընտրութեան շուրջ կամ որեւէ այլ քաղաքական հանգուցալուծման մեխանիզմի շուրջ համաձայնութեան: Սա է գլխաւոր խնդիրը, որ պէտք է լուծել, եւ որից կողմերն առայժմ շատ են հեռու: Այստեղ առաւելագոյն պատասխանատուութիւնը արմատական ընդդիմութեան դաշտում է, որովհետեւ յամենայնդէպս այդ դաշտում է, որ իսպառ մերժուում է որեւէ երկխօսութեան հնարաւոր

ութիւն: Եւ այստեղ է, որ առաջանում է հարցը կամ համոզումը, որ այդ ընդդիմութեան շրջանակում իրական օրակարգը պետութիւնը եւ դրա առաջ կանգնած մարտահրաշխանքները չեն, այլ իշխանութիւնը, որի համար նրանք պատրաստ են նաեւ ստեղծել իրավիճակ, որից օգտուել կարող են միայն ու միայն այն ուժերը, որոնց ձեռնտու է Հայաստանը, այսպէս ասած, խաղից հանելը:

Դրա մասին են վկայում եւ այն յայտարարութիւնները, որ հնչում են Ատրպէյճանից եւ Թուրքիայից, որոնք, առերեւոյթ աջակցելով Հայաստանի իշխանութեանը, իրականում ջուր են լցնում արմատական ընդդիմութեան ջրաղացին՝ խորացնելով Հայաստանի ներքաղաքական կյանքում իռացիոնալ եւ ապակառուցողական դիմակայութիւնն ու դիսկուրսը, թոյլ չտալով Հայաստանում քննարկումներ, որոնք սկսելու են արդեն պտտել թէեւ պատերազմի հետեւանքով վնասուած, ծանր կորուստ կրած, սակայն դեռեւս կանգուն ջրաղացը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱՎԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱՋԱՊԱՂԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party
 of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան-Մարութեան Հանդիպման Ընթացքին Համաձայնութիւն Զէ Գոյացած



Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար՝ Էտոն Մարութեան հանդիպումի ընթացքին

«Արտահերթ ընտրութիւններ անցկացնելու շուրջ համաձայնութիւն ձեռք չբերուեց», - Կառավարութեան ներս վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ մօտ մէկ ժամ տեւած բանակցութիւններէն ետք յայտարարեց ԱԺ-ի ընդդիմադիր «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար՝ Էտոն Մարութեան:

Պայմանաւորուած են կրկին բանակցել «Բարգաւաճ Հայաստանի» դիրքորոշումը պարզ դառնալէ ետք. - «Վարչապետը երկու հարցը իրար հետ չի կապում: Մենք երկու հարցը իրար հետ ենք կապել: Օրինակ, մէկը ես չեմ պատկերացնում առանց Գլխաւոր շտաբի խնդիրը լուծելու արտահերթ ընտրութիւններ: Բայց ուզում եմ օր առաջ արտահերթ ընտրութիւններ լինի: Դրա համար առաջարկում էի, որ եկէք համաձայնութեան գանք, էս մասը դադար տանք, թողնենք ընտրութիւններից յետոյ դա զբաղուելու հարց, եւ գնանք առաջ... Վարչապետը ասում է, որ այդ խնդիրները պէտք չի կապել իրար»:

«Ազատութեան» հարցին, թէ արդեօք իրենք պատրաստ են բանակցութիւններու երկրորդ փուլին հրաժարիլ իրենց նախապայմանէն, Մարութեան արձագանգած

է. - «Ես չգիտեմ երկրորդ փուլում բանակցութիւնների մենք ինչ կ'ունենանք: Ես յոյս ունեմ, որ բոլորը կ'ունենան իմաստնութիւն՝ թէ՛ իշխանութիւնում, թէ՛ Զինուած ուժերում, թէ՛ փողոցում քայլող մարդիկ, բոլորս կ'ունենանք իմաստնութիւն, որ էք բանակցութիւնների երկրորդ փուլում... չեմ ուզում վատ բաներ ասեմ, ինչ-որ արհաւիրք չլինի, նոր գանք խօսենք դրա մասին: Ես յոյս ունեմ, որ ինչ-որ ձեւով ինչ-որ ճանապարհ գտնելու ենք: Հիմա էլ ճանապարհը ոնց կը գտնենք, դեռ չգիտեմ: Բայց ես պատրաստ եմ էլ ճանապարհը գտնելու, էլ կամքը կայ: Ես յոյս ունեմ, որ իմ ներկայացրած խնդիրների վերաբերեալ էլ վարչապետը կը մտածի մինչեւ միւս հանդիպում»:

«Պայմանաւորուեցինք, որ միայն մեր դիրքորոշումով չի կարող թեման փակուել», - շարունակած է Մարութեան: - «Պէտք է ուրիշ ուժեր էլ... որովհետեւ խորհրդարանը չենք կարող ցրել միայն մեր դիրքորոշումով: Որովհետեւ, եթէ խօսքը գնում ա հետեւեալի մասին, որ, օրինակ, ես հրաժարուում եմ վարչապետի թափուր պաշտօնը լինելու պարագայում առաջադրուելուց, բայց միւս ուժը չի հրաժարուում, էլ քննարկումը անիմաստ ա դառնում»:

Յուցարարները Շրջափակած Են Ազգային Ժողովի Սուտքերը

Մարտ 9-ին «Հայրենիքի փրկութեան շարժման» վարչապետի միասնական թեկնածու՝ Վազգէն Մանուկեան Բաղրամեան պողոտայի հանրահաւաքի ժամանակ կոչ ըրաւ փակելու Ազգային ժողովի շէնքի բոլոր մուտքերը:

Ան ըսաւ, որ պէտք չէ թոյլ տալ պատգամաւորներուն մուտք գործել Ազգային ժողովի շէնք: Անկէ յետոյ իրավիճակը կտրուկ լարուեցաւ, քաջշուկ սկսաւ ոստիկաններու եւ անոնց միջեւ: Հանրահաւաքի մասնակիցները շրջափակած են խորհրդարանի բոլոր մուտքերը, եւ այնտեղ պատրաստուած են վրաններ տեղադրել:

Շարժման համակարգող՝ Իշխան Սաղաթէյեան յայտարարեց, որ նպատակ չունին անցնիլ Ազգային ժողովի շէնքի տարածք եւ յորդորեց տեղիք չտալ սաղարան քննարկ:

Հայաստանի Պետական Պարտքը Հասած է 8 Միլիար 24 Միլիոն Տոլարի

Հայաստանի արտաքին պարտքը Յունուարի վերջի դրութեամբ կազմած է 6 միլիար 068.412 միլիոն ԱՄՆ տոլար՝ նախորդ ամսուայ համեմատ աճելով 15.265 միլիոն տոլարով: Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ վիճակագրական կոմիտէն: Արտաքին պարտքը տոլարով աճած է, դրամով՝ նուազած:

Հայաստանի պետական պարտքը Յունուար 31-ի դրութեամբ կազմած է 8 միլիար 024.878 միլիոն ԱՄՆ տոլար՝ նախորդ ամսուայ համեմատ աճելով 56.391 միլիոն տոլարով:

ՀՀ կառավարութեան պարտքը Յունուար 31-ի դրութեամբ կազմած է 5 միլիար 568.748 միլիոն ԱՄՆ տոլար:

Տէր Պետրոսեան Ողջունած է Հակասահմանադրական Գործողութիւններու Չերթալու Զինուորականութեան Պահուածքը

Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեան ողջունած է զինուորականութեան զուսպ պահուածքը՝ որոշ ուժերու կողմէ անոր հակասահմանադրական գործողութիւններու մղելու կոչերուն եւ դրդումներուն նկատմամբ: «Արմէնփրէս»-ի հարցումամբ՝ Տէր Պետրոսեանի «Արձանագրումներ պահի թելադրանքով» յղուածը հրապարակած է Ilur.am-ը:



Տէր Պետրոսեանի «Արձանագրումներ պահի թելադրանքով» յղուածը հրապարակած է Ilur.am-ը:

«Ինձ համար լիովին հասկանալի է զինուորականութեան բարձրագոյն հրամկազմի վրդովմունքը եւ բանակի դիրքորոշումը՝ միջամտելու իր իրաւասութիւններէն դուրս գտնուող քաղաքական գործընթացներին, ինչի պատճառով ոչ այլ ինչն էր, եթէ ոչ վարչապետի անզգոյշ փորձը՝ իր կրած նուաստացուցիչ պարտութեան մեղքը բանակի վրայ բարդելու: Դրանով հանդերձ, ուզում եմ ողջունել զինուորականութեան զուսպ պահուածքը՝ որոշ ուժերի կողմից նրան հակասահմանադրական գործողութիւնների մղելու կոչերի եւ դրդումների նկատմամբ: Նման պահուածքը ես գնահատում եմ, որպէս բանակի ղեկավարութեան պետական մտածողութեան օրինակելի դրսեւորում եւ երկիրը կործանարար ցնցումներից զերծ պահելու ազնիւ ձգտում, ինչն արժանի է մեր ողջ ժողովրդի անկեղծ երախտագիտութեանը», - նշած է ՀՀ առաջին նախագահը:

Լեւոն Տէր Պետրոսեան միաժամանակ չափազանց վստահաւոր

եւ դատապարտելի համարած է որոշ քաղաքական գործիչներու անպատասխանատու յայտարարութիւնները՝ ռազմական չեղաշրջումով որպէս պետութեան առողջացման դրական միջոց ներկայացնելու՝ զայն հիմնաւորելով որոշ երկիրներու մէջ արձանագրուած չափորինակներով (Հարաւային Բորնէա, Եգիպտոս):

«Այդպիսի օրինակներ, անշուշտ, կան, բայց տասնապատիկ աւելի շատ են այն դէպքերը, երբ չեղաշրջումները, դառնալով պարբերական, բառիս բուն իմաստով յանգեցրել են պետականութեան ոչնչացման եւ ժողովուրդների տեւական տառապանքների (Աֆղանիստան, Սուտան, Նիքարակուա, Հայիթի, Տոմինիքեան Հանրապետութիւն եւ Լիպիա, Սոմալ, Եմէն, Իրաք, Սուրիա, Լիբանան եւ այլն)», - ըսած է Տէր Պետրոսեան:

Լեւոն Տէր Պետրոսեան աւելցուցած է, որ ողջ հայութեան պարտքն է՝ առաջնորդուիլ բացառապէս այս գիտակցութեամբ եւ ընել ամէն ինչ, որ Հայաստանը չլրացնէ յիշեալ պետութիւններու շարքը:

Մշակուած Ե Պետական Պահպանութեան Ծառայութիւնը Վարչապետի Ենթակայ Մարմին Դարձնելու Նախագիծ

Վարչապետի աշխատակազմը մշակած է եւ իրաւական աքթերու նախագիծերու հրապարակման միասնական կայքը տեղադրած նոր նախագիծ, որով կ'առաջարկուի պետական պահպանութեան ծառայութիւնը առանձնացնել Ազգային անվտանգութեան ծառայութեան եւ զայն ներառել վարչապետին ենթակայ մարմիններու շարքին մէջ:

Ծառայութիւնը, որ կ'ապահովէ պետական պաշտպանութեան ենթակայ անձեր եւ շէնք-շինութիւններու անվտանգութիւնը, ներկայիս օրէնսդրական կարգաւորումներու համաձայն՝ ունի Ազգային անվտանգութեան ծառայութեան գրասենեակի կարգավիճակ: Նախագիծին մէջ, որպէս հիմնաւորում նշուած է.

«Պետական պահպանութեան ծառայութիւնը հանդէս է գալիս որպէս որոշակիօրէն ինքնուրոյնութեամբ օժտուած միաւոր, որի գործառնությունները իրացման գործընթացում թէեւ Ազգային անվտանգութեան ծառայութեան աջակցութեան կարիքն առանձին դէպքերում առկայ է, սակայն դրանց

կենսագործումն անմիջականօրէն «պայմանաւորուած» չէ Ազգային անվտանգութեան ծառայութեան մասնակցութեամբ, եւ հարկ եղած դէպքում համապատասխան աջակցութիւնը լիարժէք կերպով կարող է տրամադրուել նաեւ պետական մարմինների միջեւ փոխգործակցութեան շրջանակներում: Աւելին, պետական պահպանութեան ծառայութեան որոշակի ինքնուրոյնութեան արտացոլումն է նաեւ վարչապետի անմիջական մասնակցութիւնը նրա ղեկավար կազմի ձեւաւորման հարցում՝ ծառայութեան ղեկավարը նշանակուում եւ ազատուում է հանրապետութեան նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկութեամբ, իսկ առաջին տեղակալը՝ վարչապետի կողմից՝ Ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէնի ներկայացմամբ:

Այժմ վարչապետին ենթակայ երեք մարմին կայ՝ Ոստիկանութիւնը, Պետական վերահսկողական ծառայութիւնը եւ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը, որու կազմէն ներս ալ ներառուած է պետական պահպանութեան ծառայութիւնը:

ԼՈՒՐԵՐ

Արցախի Նախագահը Անդրադարձած է Կարմիր Շուկայի Առնչութեամբ Շրջանառուող Լուրերուն



Արցախի նախագահը Կարմիր Շուկայի բնակչութեան հետ հանդիպման ընթացքին

«Պատերազմի ընթացքում հակառակորդն ամէն գնով ցանկացել է վերցնել Մարտունու շրջանի Կարմիր շուկայ բնակավայրը»: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ այս մասին Կարմիր շուկայի գիւղական համայնքի բնակչութեան հետ հանդիպման ատեն ըսած է Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան՝ անդրադառնալով վերջին շրջանին այդ կապակցութեամբ շրջանառուող տարբեր խօսակցութիւններուն:

«Մեր հերոս տղաների ու ձեր շնորհիւ՝ յաջողուել է պահել գիւղը: Բանակցութիւնների ընթացքում, երկար ժամանակ, ամէն քայլ անում էին, որպէսզի մենք յանձնենք Կարմիր շուկան: Սակայն ես ասել եմ՝ մոռացէ՛ք Կարմիր շուկան: Աւելին՝ քաղաքաշինութեան նախարարը յանձնարարական է ստա-

նալու՝ լրացուցիչ ուժեր ներգրաւել գիւղում շինարարական աշխատանքներն աշխուժացնելու համար: Պատերազմից յետոյ ամենավատ վիճակում գտնուում են թաղավարդն ու Կարմիր շուկան, բայց մենք չենք յուսահատուել, այլ հակառակը՝ ամենաառաջինն այստեղ ենք շինարարութիւն սկսել: Առաջիկայ 3 տարում պէտք է աւարտենք տեղահանութեան բնակարանային խնդրի լուծումը, այնուհետեւ՝ նրանց, ովքեր տուն չունեն: Կարմիր շուկայում 140-150 առանձնատուն ենք կառուցելու: Այդ աշխատանքները մեր ուժերով պիտի իրականացնենք: Ուստի ձեր աշխատանքներն ուղղէ՛ք շինարարական խմբակներ ձեւաւորելուն», - մասնաւորապէս ըսած է Արցախի Հանրապետութեան նախագահը:

Տաւուշի Մարզպետը Պատասխանած է Սահմաններու Որոշման Մասին Կեղծ Լուրերուն

Տաւուշի մարզպետարանը եւ Տաւուշի մարզպետ՝ Հայկ Չոպանեան պաշտօնապէս պատասխանած են այն շրջանառուող տեղեկութիւններուն, թէ իբր Տաւուշի մարզի սահմաններու որոշման գործընթաց կը կատարուի:

Ինչպէս «Արմէնփրէս»-ին տեղեկացուցին ՀՀ Տաւուշի մարզպետարանէն, հայ-ատրպէյճանական սահմանի Տաւուշի հատուածին մէջ սահմաններու որոշման ոչ մէկ գործընթաց կայ եւ կը նախատեսուի:

«Միւրեւի տաւուշցիներ, մեզ հնարաւոր չէ խուճապի մատնել, մեր սահմանները ամուր են նաեւ ձեզնով:

Կեղծ եւ պառակտիչ հրապարակումները գնահատում ենք որպէս յանցագործութիւն եւ հրաւիրում իրաւապահ մարմիններին ու շաղկապներին», - ըստ էության Տաւուշի մարզպետարանի յայտարարութեան մէջ:

Իսկ Տաւուշի մարզպետ՝ Հայկ Չոպանեան յայտարարութեամբ նշած է. «Միւրեւի հայրենակիցներ, յանցագործ, կեղծ եւ անբարոյական մարդիկ նորից շահարկում են մեր սահմանների անվտանգութիւնը, փոթորկում են սահմանին ապրող մարդկանց հանգստութիւնը:

Հայաստանի սահմանը, ինչպէս նախկինում, այնպէս էլ հիմա մեր գիտնականներին եւ սահմանապահ ժողովրդի կողմից լիարժէք պաշտպանում է, իսկ անմենաչն-



Տաւուշի մարզպետ՝ Հայկ Չոպանեան

չին վտանգի դէպքում բոլորս մէկ մարդու նման լինելու ենք սահմանին»:

Մարզպետը անբարոյ եւ անպատասխանատու համարած է վերոնշեալ գործողութիւնները, ինչպէս նաեւ անձնական վիրաւորանք իր եւ Տաւուշի ժողովուրդի հասցէին: «Անձնապէս հետամուտ եմ լինելու, որպէսզի բոլորն առնուազն հրապարակաջօրէն ներողութիւն խնդրեն:

Եթէ որեւէ մէկը մտահոգ է, կարող է գալ Տաւուշ եւ տեսնել, թէ ինչպէս ենք ապրում, պահում ու զարգացնում մեր երկիրը», - աւելցուցած է Տաւուշի մարզպետ՝ Հայկ Չոպանեան:

Հայաստանը կը Բարելաւ Դիրքերը Տնտեսական Ազատութեան Միջազգային Ցուցակին Կրայ

Հայաստանը երկու հորիզոնականով բարելաւած է դիրքերը The Heritage Foundation-ի տնտեսական ազատութեան 2021 թուականի համաթուին մէջ:

Առաւելագոյն 100 միաւորէն անցել տարի Հայաստանը 71,9 միաւոր հաւաքած է՝ դասուելով «հիմնականին ազատ» տնտեսութիւն ունեցող երկիրներու շարքին: Հինգշաբթի օր հրապարակուած գեկոյցով Հայաստանը 178 երկիրներու մէջ 32-րդ հորիզոնականին վրայ է:

Նախորդ տարուայ ցուցակին վրայ, երկիրը կը գրաւէր 34-րդ տեղը: 2018 եւ 2019 թուականներուն Հայաստանը համապատասխանաբար 44-րդ եւ 47-րդ հորիզոնականներուն վրայ էր:

Ուաշինկթոնի մէջ հիմնուած հեղինակաւոր The Heritage Foundation-ը Միացեալ Նահանգներու հանրային քաղաքականութեան ազդեցիկ կառույցներէն կը համարուի: Ցուցակը կազմելու ժամանակ կազմակերպութիւնը կ'առաջնորդուի երկիրներու ձեռնարկատիրութեան, աշխատուժի, ֆինանսական, ներդրումային, առևտրային ազատութիւններու աստիճանով, հարկային քաղաքականութեամբ, սեփականութեան իրաւունքի ապահովմամբ, դատական համակարգի

արդիւնաւէտութեամբ եւ վարչական օրինաւարութեամբ:

2021 թուականի գեկոյցը հրապարակուած է Covid-19 համավարակի տարածման պայմաններու մէջ համաշխարհային տնտեսութեան համար ծանր ժամանակներուն:

«Քորոնա» ժահրի համավարակին հակազդելուն գուզահեռ՝ տնտեսական ազատութիւնը առաւել կարեւոր պիտի ըլլայ քան երբեք», - ըստ էության գեկոյցով:

Հարաւային Կովկասի մէջ, ըստ ցուցակին, տնտեսական ազատութեան ամենաբարձր ցուցանիշը գրանցած է Վրաստանը՝ 77,2 միաւորով գրաւած է 12-րդ հորիզոնականը: Ատրպէյճանը 38-րդ տեղն է:

Թէեւ գեկոյցը հիմնականին առանձին երկիրներու չ'անդրադառնար, սակայն անցեալ տարուայ նշանակալի իրադարձութիւններուն մէջ առանձին նշմամբ ենթադրած է, որ հայ-ատրպէյճանական վեց շաբաթեայ պատերազմէն յետոյ ստեղծուած նոր իրադրութեամբ պայմանաւորուած՝ ապագային թէ՛ Հայաստանը, թէ՛ Ատրպէյճանը հնարաւորութիւն ունին բարելաւելու իրենց տնտեսական ազատութիւնները դատական արդիւնաւէտութեան եւ վարչական օրինաւարութեան տեսանկիւնէն:

Ալիեւ Պնդած է, Որ Հայաստան Կը Փորձէ Խոչընդոտել Միջանցքի Իրագործումը

Հայաստան կը խուսափի համազործակցութեան եւ կը փորձէ խոչընդոտել Ջանգեզուրեան միջանցքի իրագործումը, այսօր՝ Մարտ 5-ին յայտարարած է Ատրպէյճանի նախագահը՝ Էլյոյթ Ուսեւնայով իշխող կուսակցութեան՝ «Ենի Ազերեբայջանի» համագումարին:

Իլհամ Ալիեւ վերստին սպառնալիքներ հնչեցուցած է հայկական կողմի հասցէին, պնդելով, թէ Պաքոն «կը ստիպէ Երեւանը եւ ի վերջոյ իրականութիւն կը դարձնէ իր ցանկութիւնը»:

Պաշտօնական Երեւանը հակադրած է, թէ Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան մէջ որեւէ միջանցքի ստեղծման մա-

սին խօսք չկայ: «Ջանգեզուրն անուանելով «ատրպէյճանական պատմական տարածք» եւ յղում կատարելով մտացածին «միջանցքի»՝ Ատրպէյճանի նախագահը դիտաւորեալ տապալում է Նոյեմբերի 9-ի եւ Յունուարի 11-ի եռակողմ յայտարարութիւնների իրագործումը: Նման հռետորաբանութիւնը հակասում է Ատրպէյճանի ստանձնած պարտաւորութիւններին, անթաքտ մարտահրաւէր է միջազգային իրաւունքին եւ որեւէ կերպ չի նպաստում տարածաշրջանում կայունութեան հաստատմանը», - շեշտած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Աննա Նաղդալեան:

Եւրոպական Միութիւնը Հայաստանեան Ուժերուն Բանակցութիւններու Կոչ Կ'ընէ

Եւրոպական Միութիւնը վերստին կոչ կ'ընէ հայաստանեան ուժերուն տարածաշրջանները հարթելու բանակցութիւններու միջոցով: Ըստ պաշտօնական հաղորդագրութեան՝ ուղերձը Հայաստանի արտաքին գործոց նախարարին փոխանցած է ԵՄ արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավար՝ Ժոզէփ Պորելը՝ երէկ՝ Մարտ 2-ին տեղի ունեցած հեռախօսագրոյցի ժամանակ:

«Բարձրագոյն յանձնակատարը անդրադարձել է այն մարտահրաւէրներին, որոնց առջեւ կանգնած է այսօր Հայաստանը, եւ ընդգծել, որ բոլոր դերակատարները պէտք է քաղաքական տարա-

ձայնութիւնները հարթեն խաղաղ ճանապարհով՝ խստորէն հետեւելով խորհրդարանական ժողովրդավարութեան սկզբունքներին ու գործընթացներին»,- ըստ էության հաղորդագրութեան մէջ:

Ըստ Պորելի խօսքի, կողմերը քննարկած են նաեւ տնտեսական ու առևտրային համագործակցութիւնը, տարածաշրջանի անվտանգութեան վերաբերող հարցեր:

Պաշտօնական Երեւանի հաղորդմամբ, երկուստեք կարեւորած են Լեւոնային Ղարաբաղի խաղաղ կարգաւորման հարցերու հասցեագրումը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան շրջանակներէն ներս:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱԿԱՍՏԱԳԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Հայաստանի Կառավարութիւնը Որոշած է Դադրեցնել ԵՈՒՆԻՍԷՖ-ի Ներկայացուցիչ Պաշտօնավարումը



Հայաստանի մէջ ԵՈՒՆԻՍԷՖ-ի ներկայացուցիչ՝ Մարիան Քլարք-Հաթինկ

Կառավարութիւնը որոշած է դադրեցնել Հայաստանի մէջ ԵՈՒՆԻՍԷՖ-ի ներկայացուցիչ՝ Մարիան Քլարք-Հաթինկի պաշտօնավարումը: Պաշտօնական տեղեկութիւնը տարածուեցաւ մամուլով շրջանառուող այն լուրերէն յետոյ, թէ իբր Քլարք-Հաթինկին Հայաստանի իշխանութիւնները «փերսոնա նոն կրաթա»՝ անցանկալի անձ յայտարարած են՝ Ատրպէյճանի եւ Մեծ Բրիտանիոյ օգտին լրտեսելու համար: Մինչդեռ Հայաստանի արտաքին գերատեսչութիւնը չի հաստատեր այդ պնդումները եւ սահմանափակուած է կարճ մեկնաբանութեամբ:

«Հայկական կողմի համար խնդրաշարժը է եղել Հայաստանի Հանրապետութիւնում ԵՈՒՆԻՍԷՖ-ի ներկայացուցիչ Մարիան Քլարք-Հաթինկի կողմից իր մանտաթի իրականացման գործում թերացումները եւ ոչ համագործակցային աշխատելաճը, ուստի կառավարութեան կողմից որոշում է կայացուել դադարեցնել նրա պաշտօնավարումը որպէս Հայաստանի Հանրապետութիւնում ԵՈՒՆԻՍԷՖ-ի ներկայացուցիչ: Վերոնշեալ որոշման մասին տեղեկացած են ՄԱԿ մշտական համակարգողը եւ ԵՈՒՆԻՍԷՖ-ի ներկայացուցիչները», - յայտնած է ԱԳՆ մամուլի քարտուղար Աննա Նաղտալեան:

Թէ մասնավորապէս ի՞նչը եղած է Հայաստանի կառավարութեան որոշման պատճառը, ԵՈՒՆԻՍԷՖ-ի հայաստանեան գրասենեակէն ալ փակագիր չեն բանար: ԵՈՒՆԻՍԷՖ-էն նաեւ չեն ցանկար անդրադառնալ Մարիան Քլարք-Հաթինկին լրտեսութեան մէջ մեղադրելու:

լուրերուն: «Այս պահին հիմնուած ենք ԱԳՆ-ի տարածած յայտարարութեան վրայ, ինչ որ տիկին Նաղտալեանն է յայտնել, դրանից աւելին հիմա չենք կարող աւելացնել: Մենք իրեն միշտ ճանաչել ենք որպէս բարձր որակաւորում ունեցող եւ փորձառու մասնագէտ, որը նուիրուած է եղել իր գործին, եւ մինչեւ Հայաստան գալը նա աշխատել է ԵՈՒՆԻՍԷՖ-ի համար Մալթա, Սոմալի, Կանադա, Ֆենիքս, Մատակակարում, մի շարք այլ երկրներում», - ըսաւ ԵՈՒՆԻՍԷՖ Հայաստանի հաղորդակցման աշխատակազմի ղեկավար՝ Զառա Սարգսեան:

Երեխաներու իրաւունքներու հարցերով զբաղող ԵՈՒՆԻՍԷՖ-ի հայաստանեան գրասենեակէն միեւնոյն ժամանակ հերքած են, թէ Քլարք-Հաթինկը հապճեպ լքած է Հայաստանը: ԵՈՒՆԻՍԷՖ Հայաստանի հաղորդակցման աշխատակազմի ղեկավար՝ Զառա Սարգսեան «Ազատութիւն»ին յայտնեց, որ վերջինս Երեւան է եւ կը շարունակէ պաշտօնավարել, մինչեւ զինք փոխարինեն: ԵՈՒՆԻՍԷՖ-ը Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցած է գրասենեակի նոր պաշտօնակատարը, եւ կը սպասեն գերատեսչութեան հաստատման:

Հայաստանի գլխաւոր դատախազութեանն ալ յայտնած են, որ տուեալներ չունին Հայաստանի մէջ ԵՈՒՆԻՍԷՖ-ի ներկայացուցիչ Ատրպէյճանի եւ Մեծ Բրիտանիոյ օգտին լրտեսութիւն կատարելու վերաբերեալ, սակայն կ'ուսումնասիրեն անոր մասին հրապարակումները:

Նիկոլ Փաշինեան Հեռաձայնային Ձրոյց Ունեցած է

Շարունակուած էջ 1-էն

խագահութեան գործունէութեան կարեւորութիւնը եւ պատրաստակամութիւն յայտնած շարունակել իր դերակատարումը հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ:

Ըստ հաղորդագրութեան՝ պետական քարտուղարը ընդգծած է Հայաստանի հետ գործընկերային յարաբերութիւններու զարգացման կարեւորութիւնը: Ան բարձր գնահատած է ժողովրդավարութեան ասպարէզէն ներս Հայաստանի արձանագրած ձեռքբերումները եւ վստահեցուցած, որ ԱՄՆ պիտի շարունակէ բարեփոխումներու համար Հայաստանին տրամադրուող

օժանդակութիւնը: Երկուստեք կարեւորած են համագործակցութիւնը Հայաստանի մէջ օրէնքի գերակայութեան ամրապնդման, քորուփցիայի դէմ պայքարի, արդարադատութեան համակարգի եւ ոստիկանութեան բարեփոխումներու ուղղութեամբ:

Միացեալ Նահանգներու Պետական Բաժանմունքի մամուլի խօսնակի գրասենեակի հաղորդագրութեան համաձայն, զոր հրապարակած է Հայաստանի մօտ ԱՄՆ-ի դեսպանութիւնը, պետական քարտուղար Պլինքըն եւ վարչապետ Փաշինեան երկուստեք ընդգծած են հայ-ամերիկեան երկկողմանի յարաբերութիւններու կարեւորութիւնը:

«Պետական քարտուղարը շեշ-

Հայաստան Այս Տարի Զի Մասնակցի «Եւրատեսիլ» Երգի Մրցոյթին



Հայաստան այս տարի չի մասնակցի «Եւրատեսիլ» երգի միջազգային մրցոյթին, յայտարարած է Հանրային հեռուստաընկերութիւնը՝ նշելով, որ որոշումը կայացուած է «համապարփակ քննարկումներէն եւ բանակցութիւններէն» յետոյ:

«Տեղի ունեցած իրադարձութիւնները, ժամանակի սղութիւնը եւ այլ առարկայական հանգամանքներ անհամադրելի են երգի մրցոյթում Հայաստանի պատշաճ ներկայացման հետ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

«Ազատ Եւրոպա» Ռատիոկայանի Նախագահը Անհանգստացած Է Երեւանի Մէջ «Ազատութեան» Լրագրողներու Նկատմամբ Յարձակումներով

«Ազատ Եւրոպա/Ազատութիւն» ռատիոկայանի նախագահ եւ գլխաւոր գործադիր տնօրէն՝ ճէյմի Ֆլայ յայտարարութեամբ հանդէս եկած է, ուր իր անհանգստութիւնը յայտնած է Երեւանի մէջ «Ազատութիւն»ի լրագրողներու նկատմամբ յարձակումներու կապակցութեամբ:

«Անհանգստացած եմ Երեւանի մէջ Փետրուար 23-ի բողոքի հաւաքները լուսաբանող «Ազատութիւն»ի լրագրողներու նկատմամբ ֆիզիքական եւ բանաւոր յարձակումներով», - յայտարարած է Ֆլայ՝ շեշտելով. - «Մեր լրագրողները միայն կը ջանան Հայաստանի մէջ մեր լսարանի համար հրատապ լրատուութիւն ապահովել»:

Նշելով, որ քաջալերուած է Քննչական կոմիտէի կողմէ քրէական գործի քննութեամբ, որու հետեւանքով կրնան մեղադրանքներ առաջադրուիլ «Ազատութիւն»ի լրագրողներու օրինական մասնագիտական գործունէութիւնը խոչընդոտած անձերու նկատմամբ, ռատիոկայանի նախագահը կոչ կ'ընէ Հայաստանի իրաւապահները ապահովելու, որպէսզի բոլոր լրագրողները կարողանան կատարել իրենց աշխատանքը՝ առանց վախնալու

մանքներ անհամադրելի են երգի մրցոյթում Հայաստանի պատշաճ ներկայացման հետ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Մրցոյթը այս տարի նախատեսուած է Մայիսին՝ Ռոթըրդամ քաղաքը: Հայաստանը «Եւրատեսիլ»-ին կը մասնակցէր 2006 թուականին: Մրցոյթին, Հայաստանը առաջին ներկայացնողը եղած է Անտրէյն:



հնարաւոր վնասէն: «Ազատութիւն»ի հայկական ծառայութեան լրագրող Արտակ խուլեան եւ աշխատակից Կարէն Զիլինգարեան Փետրուար 23-ին ուղիղ եթերով ընդդիմութեան բողոքի ցոյցը լուսաբանելու ատեն յարձակման ենթարկուեցան խումբ մը ցուցարարներու կողմէ, որոնք հարուածեցին անոնց, վիրաւորական արտայայտութիւններ ըրին եւ վնասեցին սարքաւորումները:

Քննչական կոմիտէն Մարտ 3-ին հաղորդեց, որ վարոյթ ընդունած է փաստի կապակցութեամբ Ոստիկանութեան ֆենիքսեան Նախնային Նախնային 164-րդ յօդուածի առաջին մասով՝ «լրագրողի օրինական մասնագիտական գործունէութիւնը խոչընդոտելը», յարուցուած քրէական գործը:

«Պետական քարտուղարը ողջունեց ջանքերը ուղղուած լեւոնալին Ղարաբաղի հակամարտութեան տեւական քաղաքական կարգաւորման հասնելուն, ինչ որ շահեկան է տարածաշրջանի բնակչութեան համար», - հաղորդած է Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքական գերատեսչութեան խօսնակ՝ Նետ Փրայսի գրասենեակը:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Յոննի Պապին Այցը Իրաք



Անցնող շաբթուան միջազգային գիտալուր իրադրութիւններէն մին հանդիսացաւ Հռոմի Ֆրանչիսկոս Պապի Իրաք կատարած քառօրեայ այցելութիւնը: Կաթոլիկ Եկեղեցւոյ ընհանուր հովուապետին սոյն այցելութիւնը պատմական կը համարուի, քանի որ առաջին անգամ ըլլալով Վատիկանի սրբազան քահանայապետը նման ուղեւորութիւն մը կը կատարէր:

Արդարեւ Միջին Արեւելքի այս երկիրը կատարած իր այցելութեամբ, Ֆրանչիսկոս Պապը կը նպատակադրէր զօրավիզ կանգնել այս շրջանի քրիստոնեաներուն եւ այլ փոքրամասնութիւններուն, ոորնմցէ շատեր սկսած էին լքել իրենց բնակավայրերը, որոնք չէին համար աւելի ազատ եւ ապահով երգիքներ: Իր այս այցելութիւններէն ներս սրբազան քահանայապետը հանդիպումներ ունեցաւ տարբեր յարանուանութիւններու եւ դաւանանքներու պետերուն հետ (Խալամ, եգիպտի, քրիստոնեայ, որոնց շարքին Հայ Կաթողիկէ եկեղեցի):

Ֆրանչիսկոս Պապը առանձին հանդիպում ը ունեցաւ նաեւ Իրաքի շիրիթ համայնքի կրօնապետ Մեծն Այաթոլլա Ալի Սիւթանիի հետ, Նաթաֆ քաղաքի իր բնակարանին մէջ: Ասիկա առաջին անգամ նէր որ պապ մը կը հանդիպէր մեծ այթոլլայի մը: 90-ամեայ Սիւթանիի համեստ բնակարանին մէջ տեղի ունեցած սոյն մէկտեղումին, Ֆրանչիսկոս պապը խոսակցոյց երկրի իսլամ-

ներուն կոչ ուղղեց խաղաղ համակեցութեամբ ապրելու քրիստոնեայ փոքրամասնութիւններուն հետ: Իր կարգին Մեծն Այաթոլլա Սիւթանիին Նաթաֆի իր սրբատեղիէն ըսաւ թէ իշխանութիւններուն կը մնայ իրենց հեղինակութիւնն ի գործ դնել պաշտպանելու Իրաքի քրիստոնեաները, որպէսզի այլ Իրաքցիներու նման ապրին համահասար իրաւունքներով եւ բարօր կեանքով:

Սրբազան քահանայապետն այցելեց նաեւ Աբրահամ Մարգարէի ծննդավայրը: Ան կը գտնուի Ուր քաղաքին մէջ եւ դարաւոր ուխտավայրն է թէ քրիստոնեաներուն թէ հրեաներուն ու իսլամներուն հաւասարապէս: Հիւսիսային Իրաք կատարած այցելութեան ընթացքին պապը ականտես եղաւ Տահէշի կողմէ գործուած արարքներու սարսափելի հետքերուն: Առաւել ահաւոր տեսարան մը պարզուեցաւ երբ մուտք գործեց Մուսուլ քաղաքը, որուն գլխաւոր հրապարակի չորս եկեղեցիներն ալ քար ու քանդ եղած էին: Իրաքի այս երրորդ մեծագոյն քաղաքը կը յիշեցնէ Բ. աշխարհամարտին կործանուած Գերմանիոյ Տրեզտէն քաղաքը եւ կամ ձաբոնի Հերոշիմա քաղաքի աւերակները աթոմական ռումբի պայթիւնէն ետք: Արդարեւ Մուսուլը անարգ գոհն էր Տահէշի...:

84-ամեայ Ֆրանչիսկոս Պապի Իրաք այցելութիւնը կոչ մըն էր խաղաղութեան, հանդուրժողութեան եւ համակեցութեան:

ՕՃՆԻԿ Գասպարեանը Ազատելու Հարցը

Շարունակուած էջ 1-էն

սահմանադրականութեան հարցով կարող էր դիմել ՄԴ, անցած է, ուստի ԶՈւ գլխաւոր շտաբի պետը պաշտօնէն այլեւս ազատուած է իրաւունքի ուժով:

«Նախագահը մինչ այս պահը որեւիցէ ձեռնով վարչապետի որոշումը չի բողոքարկել եւ չի էլ ստորագրել: Իսկ օրէնքը յստակ նշում է, որ այդ պարագայում օրէնքը իրաւունքի ուժով սկսում է գործել», - ըսած է Սիմոնեան:

Միւս կողմէ, «Հրապարակ» օրաթերթը կը գրէ, որ Գասպարեանը նստավայրէն դուրս պիտի չգայ: Ալեն Սիմոնեան յայտարարած է, որ անօրինական գործողութիւնները իրաւական հետեւանքներ կ'ունենան. - «Անօրինական գործողութիւնը իրենից բխեցնում է իրաւապահների արձագանգ»:

«Նախագահը մինչ այս պահը որեւիցէ ձեռնով վարչապետի որոշումը չի բողոքարկել եւ չի էլ ստորագրել: Իսկ օրէնքը յստակ նշում է, որ այդ պարագայում օրէնքը իրաւունքի ուժով սկսում է գործել», - ըսած է Սիմոնեան:

Միւս կողմէ, «Հրապարակ» օրաթերթը կը գրէ, որ Գասպարեանը նստավայրէն դուրս պիտի չգայ: Ալեն Սիմոնեան յայտարարած է, որ անօրինական գործողութիւնները իրաւական հետեւանքներ կ'ունենան. - «Անօրինական գործողութիւնը իրենից բխեցնում է իրաւապահների արձագանգ»:

Միւս կողմէ, «Հրապարակ» օրաթերթը կը գրէ, որ Գասպարեանը նստավայրէն դուրս պիտի չգայ: Ալեն Սիմոնեան յայտարարած է, որ անօրինական գործողութիւնները իրաւական հետեւանքներ կ'ունենան. - «Անօրինական գործողութիւնը իրենից բխեցնում է իրաւապահների արձագանգ»:

ՀՀ Գլխաւոր Հիւպատոս, Դեսպան Արմէն Բայբուրդեանի Հանդիպումը ԱՄՆ Կոնգրեսական Դեյվիդ Վալադառի Հետ



Փետրուարի 26-ին Լոս Անջելեսում ՀՀ գլխաւոր հիւպատոս, դեսպան Արմէն Բայբուրդեանը հեռավար հանդիպում ունեցավ ԱՄՆ կոնգրեսական Դեյվիդ Վալադառի հետ, որը ԱՄՆ Հանրապետական կուսակցութեան անդամ է: Հանդիպմանը մասնակցում էր Ֆրեզնոյում ՀՀ պատուաւոր հիւպատոս Պերճ Աբգարեանը: ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամ Վալադառն ներկայացնում է Կալիֆորնիայի Կենտրոնական հովտի կոնգրեսական 21-րդ ընտրաշրջանը հայաշատ Ֆրեզնոյի մի զգալի մասը իր մէջ ներառող:

Գլխաւոր հիւպատոս Բայբուրդեանը կոնգրեսական Վալադառիին շնորհաւորեց ԱՄՆ կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամ վերընտրուելու եւ Հայկական հարցերի կոնգրեսական յանձնախմբի համանախագահութիւնը ստանձնելու կապակցութեամբ (Co-Chair of Congressional Caucus on Armenian Issues.): Հանդիպման ընթացքում Ազ Բայբուրդեանը ներկայացրեց Արցախի դէմ ադրբեջանախուրդական ռազմական ագրեսիայի հետեւանքները Արցախի եւ Հայաստանի համար, ինչպէս նաեւ պատերազմից յետոյ առաջացած մարդասիրական ճգնաժամը: Դեսպան Բայբուրդեանը յատուկ կարեւորութիւն տուեց Ազրբեջանում պահվող հայ ռազմագերիների խնդրին՝ ընդգծելով նրանց հայրենիք շուտափոյթ վերադարձի անհրաժեշտութեան

հարցը: Զրուցակիցները պայմանաւորուեցին հանդիպումներին պարբերական բնոյթ տալու մասին՝ ծրագրելով առաջիկայ հանդիպումը Ֆրեզնոյում անցկացնել եւ երկուստէք հետաքրքրութեան հարցերը քննարկել:

Հանդիպման ժամանակ կոնգրեսական Դեյվիդ Վալադառն ջերմութեամբ արտայայտուեց ամերիկահայ համայնքի մասին եւ կարեւորեց համայնքի դերակատարութիւնը եւ ուրոյն ներդրումը ԱՄՆ խոշորագոյն նահանգի կեանքի բոլոր բնագաւառներում:

Դեսպան Բայբուրդեանը շեշտեց, որ Կալիֆորնիայի հայահոծ համայնքի ակունքները գտնուում են հէնց Կենտրոնական հովտի շրջանում՝ Ֆրեզնոյում, ուր հայկական համայնքը սկսել է ձեւաւորվել դեռեւս 19-րդ դարի վերջին տասնամեակներին: Բայբուրդեանը նաեւ գոհունակութիւն յայտնեց Հայկական հարցերի կոնգրեսական յանձնախմբի ԱՄՆ պետքարտուղարին եւ պաշտպանութեան քարտուղարին ուղղուած փետրուարի 19-ով թուագրուած նամակի համար՝ կոչով ամրապնդել ԱՄՆ-Հայաստան երկկողմ յարաբերութիւնները: Դեսպան Բայբուրդեանը նաեւ իր գնահատանքի խօսքն ասաց առայն, որ կոնգրեսական Վալադառն Արցախ էր այցելել 2017 թուականի սեպտեմբերին:

Յաջող Սկիզբ Պայտրնի Նախագահութեան

Շարունակուած էջ 1-էն

պէս Դեմոկրատներու ծայններով: Ոչ մէկ Հանրապետական քուէարկեց այս օրինագիծին՝ առարկելով, որ գումարը շատ մեծ է եւ պիտի գայ աւելցալու պետական պարտքին վրայ: Նոյն հանրապետականները, 2017 թուականին, երբ իշխանութիւնը իրենց ձեռքն էր, նոյնքան մեծ գումարի հարկային արտօնութիւններ շնորհեցին մեծահարուստ դասակարգին առանց առարկելու պետական պարտքի մասին:

Պայտրն յաջողութեամբ առաջ կը տանի նաեւ «Քորոնա» ժահրի դէմ պատմաստումի արշաւը: Ան իր պաշտօնավարման առաջին օրն իսկ խոստացաւ 100 օրուայ ընթացքին պատուաստել 100 միլիոն Ամերիկացիներ: Ներկայիս դրութեամբ, այդ խոստումի իրագործման ճանապարհին է, ոչ

թէ 100 օրուայ, այլ շատ աւելի առաջ: Վերջին տուեալներով, օրական 2.2 միլիոն Ամերիկացիներ պատուաստ կը ստանան եւ կը կարծուի թէ միլիոն աշուն երկիրը կը վերադառնայ իր բնականոն կեանքին ու կը վերականգնի ամբողջ տնտեսութիւնը:

Այս յաջողութիւններուն շնորհիւ նախագահ Պայտրնի վարկանիշը հասած է 60 տոկոսի, որ բաւական տպաւորիչ է, երբ նկատի ունենանք որ նախագահական վերջին ընտրութիւններուն երկիրը բաժնուած էր գրեթէ հաւասար երկու մասի:

Եւ Պայտրն իր շուրջ համայնքներով կարող ու փորձառու մասնագէտներ յաջող սկիզբ մը կը դնէ իր նախագահութեան՝ վերջ տալով նախորդի օրով երկրէն ներս տիրող քառասյին վիճակին:

Բնագիրեն Զայերեն Թարգմանուած Է Ականաւոր Գրող Էրիխ Մարիա Ռեմարքի «Լիզպոնի Գիշերը» Գիրքը



Էրիխ Մարիա Ռեմարքի գրականութեան երկրպագուները այսուհետեւ կրնան հայերէնով ընթերցել սիրուած հեղինակին «Լիզպոնի Գիշերը» ստեղծագործութիւնը, որու գործողութիւնները կը ծաւալուին 1942 թուականին, Ֆրանսայի մէջ:

«Ռեմարք կորուսեալ սերունդի ներկայացուցիչներէն է: Ան գրած է Առաջին, Երկրորդ համաշխարհային պատերազմներու եւ մարդու պատերազմէն ձեռք բերած փորձառութեան մասին: Ռեմարք անձամբ մասնակցած է երկու պատերազմին ալ, ուստի անոր ներկայացուցած պատկերները, տեսարանները ապրուած են, զգացմունքային, ինչ որ կը մեծցնէ հեղինակին իւրաքանչիւր գիրքի կշիռը, արժէքը», կը նշէ գիրքի թարգմանչուհի Վանուհի Պաղմանեանը:

Անոր խօսքով՝ Ռեմարք, ի տարբերութիւն իր սերունդի այլ ներկայացուցիչներու, տարբերուող ձեռագիր ունի: Պաղմանեան Ռեմարքի իւրապատկութիւնը իրատեսութիւնը կը համարէ: «Անոր գիրքերուն մէջ չկայ չափազանցութիւն կամ հակառակը: Ամէն բան բնական է, երբեք ընթերցողը անյարմար իրավիճակի մէջ չի յայտնուիր, քանի որ գործ ունի անկեղծ հեղինակի հետ: Յոյս ունիմ, որ մարդիկ թարգմանութիւնը կարդալով կը զգան այն, ինչ ես կը զգամ բնագիրը ընթերցելով», կը շեշտէ թարգմանչուհին ու կը յաւելէ, որ «Լիզպոնի Գիշերը» Ռեմարքի վեցերորդ գործն է, որ ինք կը թարգմանէ, ուստի աշխատանքը բաւականին դիւրին եղած է:

«Էտիթ Փրինթ»-ի վաճառքի բաժնի գլխաւոր մասնագէտ Դաւիթ Սամուէլեան կը պատմէ՝ դեռ տարիներ առաջ Ռեմարքի գործերը բնագիրէն հայերէն թարգմանելու

որոշում կայացուցած է: ««Յաղթական Կամար», «Երեք Ընկեր»: Այս ստեղծագործութիւնները առաւել շրջանակին, քանի որ խորհրդային տարիներուն շատ տարածուած էին, այնինչ Էրիխ Մարիա Ռեմարքի նկատմամբ հետաքրքրութիւնը միշտ մեծ է: Ան պատերազմի գրող կը համարուի, քանի որ կ'անդրադառնայ այդ արհաւիրքին, մարդկային խեղուած ճակատագրերուն: Աւագ, մեր երկրին մէջ այդ թեմաները մշտապէս ներկայ են: Ան հեղինակ է, որու գրական ժառանգութիւնը ամբողջութեամբ պէտք է բնագիրէն հայերէն ներկայացուի», կը շեշտէ Սամուէլեան կարեւորելով թարգմանչուհի Վանուհի Պաղմանեանի դերակատարութիւնը այդ հարցին մէջ:

«Էտիթ Փրինթ»-ը մինչ օրս հայերէնով ներկայացուցած է Էրիխ Մարիա Ռեմարքի «Երեք Ընկեր», «Յաղթական Կամար», «Արեւմտեան ձակատին Վրայ Նորութիւն Չկայ», «Երկինքը Ընտրեալներ Չունի», «Սեւ Կոթողը», «Ապրելու Ժամանակը եւ Մեռնելու Ժամանակը» գիրքերը:

1942 թուական: Լիզպոնի Գայի նաւահանգիստին մէջ տղամարդ մը սեւեռուն կը նախընտրուի: Ան գեղմանացի գաղթական է: Անոր կը մօտենայ տղամարդ մը եւ նաու երկու տոմս կը նուիրէ՝ փոխարէնը խնդրելով այդ գիշեր իրեն մենակ չթողնել եւ լսել իր պատմութիւնը, որ կը սկսէր 1933-ին՝ Օսնապրիւքի մէջ, եւ կ'աւարտէր այդ գիշեր Լիզպոնի Գայի նաւահանգիստին մէջ՝ Եւրոպայի փախստական ներու վերջին թաքստոցին մէջ:

Ռեմարքի վէպը, որ լոյս տեսած է 1963-ին, ճշմարտապատում նկարագրութիւնն է գաղթականներու դժիւր ճակատագրի, իսկ սէրն ու մահը գոյութեան պարտադիր ուղեկիցներն են:


Լիբանան Ոչ Եւ Է Ականաւոր Ֆուտպոլիստ Կիւլապի Ծանճանեան

Պէյրութի «Արարատ» օրաթերթէն իմացանք որ վերջերս իր մահանացուն կնքած է Լիբանանի Հայ Մարմնամարզական Միութեան (Հ.Մ.Մ) մեծ ընտանիքին անդամներէն ականաւոր ֆուտպոլիստ Կիւլապի Ծանճանեանը: Հանգուցեալն Հ.Մ.Մ-ի ֆուտպոլի առաջին խումբի ամենափայլուն աստղերէն մին կը համարուէր, ինչպէս նաեւ Հ.Մ.Մ-ի ոսկեայ օրերու պանծալի մարզիկներու պատուաբեր անդամներէն մին:

Ողբացեալ Կիւլապի Ծանճանեան, ֆուտպոլի ջերմ սիրահար մը ըլլալով, իր հմտութիւնն սկսած է ցուցաբերել 1954ին, երբ առաջին անգամ ըլլալով դաշտ կ'իջնէր որպէս Հ.Մ.Մ. Վասպուրականի կրտսերներու խումբի անդամ: Շնորհալի մարզիկը իր խելացի խաղարկութեամբ ու թիրախային դիպուկ հարուածներուն շնորհիւ, 1957ին կը ներգրաւուի Պուրճ Համուտի Հ.Մ.Մ-ի «Մասիս»-ի ֆուտպոլի Բ. դասակարգէն ներս, որպէս յետասպահ:

1961ին Կիւլապի Ծանճանեան կը հրաւիրուի մաս կազմելու Պէյրութի Հ.Մ.Մ-ի ֆուտպոլի առաջին դասակարգի խումբին, որպէս թիմի յետասպահ: Այդ օրերուն Հ.Մ.Մ-ի Ա. խումբի առաջատար անունի մարզիկներու շարքին էին նաեւ նոյն քան շնորհալի ֆուտպոլիստներ Մարտիկ Չափարեանը, Մարտիկ Շիրտմեանը, Պողոս Մարգարեանը եւ այլ խաղացողներ, որոնք իրենց արհեստավարժ բարձր մակարակի խաղարկութիւններուն շնորհիւ, արժանացան Լիբանանի Ա. խումբերու առաջնութեան տիտղոսին եւ բաժակին:

Այնուհետեւ, երկրի ախոյեան



նութեան արժանացած Հ.Մ.Մ-ի առաջատար ֆուտպոլիստներէն ընտրանի հոյլ մը, մաս կազմեց Լիբանանի ֆուտպոլի հաւաքական խումբին, երկիրը ներկայացնելու միջազգային խաղերուն: Այս բախտորոշ շրջանին, Կիւլապին ձեռնհասօրէն վարեց Հ.Մ.Մ-ի ֆուտպոլի Ա. խումբի խմբապետի պատասխանատու պաշտօնը մինչեւ 1970:

Կիւլապի Ծանճանեան, արհեստով վարպետ ոսկերիչ ըլլալով եւ մասնագէտ գործարար տասը տարի պաշտօնավարեց Թալիէի մէջ, որպէս բաժնի վարիչ: 1990ին վերադարձաւ Լիբանան, ապա գնաց Մէնտական Արաբիա: Ամուսնացած էր 1980 թուականին եւ բախտաւորուած մանչ զաւակով մը: Վերջին տարիներուն հաստատուած էր Ուքրանիա եւ հոն ալ կնքեց իր մահանացուն:

Կիւլապիի մահով Հ.Մ.Մ. կը կորսնցնէ բարձր գնահատանքի արժանացած համեստ եւ առաջատար տիպար մարզիկ մը:

«Ազատութեան Տունի» Կարծիքով

Շարունակուած էջ 1-էն

բացասական հետեւանքները Հայաստանի ժողովրդավարական զարգացումներուն վրայ:

Freedom House-ը շեշտած է, որ առհասարակ աշխարհի մեծնատիրական կառավարման ընդլայնումը շօշափելի ազդեցութիւն ունեցած է մարդու կեանքի եւ անվտանգութեան վրայ, անոնց կարգին՝ քաղաքական վէճերը ռազմական ճանապարհով լուծելու յաճախակի դարձած դէպքերը:

Իրաւապաշտպան կազմակերպութիւնը յիշեցուցած է, որ անցեալ տարի Ատրպէյճանի առաջնորդը իր բռնապետ հարեւան թուրքիոյ աջակցութեամբ պատերազմ սանձազերծեց Լեռնային Ղարաբաղի դէմ ապակայունացնելով տարածաշրջանը: Զեկոյցի հեղինակները նկատել տուած են, որ պատերազմը դադրեցնելու հարցով կը բացակայէր միջազգային մասնակցութիւնը. - «Պատերազմը դադրեցաւ Մոսկուայի խաղաղապահ առաքելութեան միջոցով, որ ամրագրեց Ատրպէյճանի տարածքային ձեռքբերումները, սակայն անպատասխան թողեց բազմաթիւ հարցեր», - յայտարարած է իրաւապաշտպան

կազմակերպութիւնը:

«Ազատութիւնը աշխարհին մէջ-2021» զեկոյցի վարկանիշային աղիւսակով Հայաստանը կը շարունակէ դասուիլ մասամբ ազատ երկիրներու կարգին՝ վաստակելով 55 միաւոր հնարաւոր 100-էն: Տարածաշրջանի մէջ իր ցուցանիշներով Հայաստանը կը գերազանցէ անազատ Ատրպէյճանը, սակայն կը գիջի մասամբ ազատ միւս հարեւանին՝ Վրաստանին:

Ի դէպ, ի տարբերութիւն Ատրպէյճանին, որ ընդամենը 10 միաւոր վաստակած է քաղաքական իրաւունքներու եւ քաղաքացիական ազատութիւններու չափման գործընթացներուն, Լեռնային Ղարաբաղը կազմակերպութեան կողմէ գնահատուած է մասամբ ազատ՝ վաստակելով 35 միաւոր:

Անդրադառնալով աշխարհի ազատութիւններու մակարդակին՝ Freedom House-ը շեշտած է, որ 2006 թուականէն ի վեր ոչ ազատ երկիրներու թիւը կը գտնուի ամենաբարձր մակարդակին վրայ, եւ յետընթաց արձանագրած են աշխարհի աւելի քան եօթ տասնեակ երկիրներ, որոնց բաժին կը հասնի մոլորակի բնակչութեան շուրջ 75 տոկոսը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ՂԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՂԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Հ.Բ.Ը.Մ.-ի 91-րդ Ընդհանուր Ժողովը Համաշխարհային Համաճարակի Պատճառով Տեղի Ունեցաւ Առցանց Դրութեամբ



27 Փետրուար 2021ին, իր աւելի քան մէկդարեայ պատմութեան ընթացքին, առաջին անգամ ըլլալով, Հ.Բ.Ը.Մ.-ի Երկամեայ Ընդհանուր Ժողովը, խախտելով աւանդութիւնը, աշխատանքները կազմակերպեց ամբողջովին առցանց դրութեամբ: Նկատի ունենալով շարունակուող համավարակը, որ արդէն թեւակոխած է իր երկրորդ տարին եւ տակաւին կը շարունակէ թէ՛ օճախներու ձեւով պահպանուելի ամբողջ աշխարհի տարածքին, Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովը յօժարեցաւ օգտուելի առցանց դրութեան ճարտարաբանութիւններէն՝ հեռավար ձեւով միաւորելու աշխարհատարած իր անդամակցութիւնը:

Հ.Բ.Ը.Մ.-ի Հայկական Համացանցային Համալսարանին ընդհանրած կարելիութեանց շնորհիւ, 32 երկիրներէ հարիւրաւոր մասնակիցներ կը ցան միանալ Zoom-ի միջոցով՝ անդերէնէ հայերէն, ֆրանսերէն եւ սպաներէն համաժամանակեայ թարգմանութեամբ:

«Անցեալ տարի պսակաձեւ ժահրի բռնկումէն ի վեր Հ.Բ.Ը. Միութիւնը առցանց դրութեամբ կրցաւ ճկունութիւն եւ հնարամտութիւն ցոյց տալ: Այդ ատենէն ի վեր մեզի համար պարզ դարձաւ, որ ոչ միայն կրնանք շարունակել մեր առաքելութիւնը, այլ նաեւ աւելի քան երբեք ընդարձակել մեր հասու ըլլալը գաղութներու աւելի մեծ գանգոստեղծութիւն, որոնց կը ծառայենք», ըսաւ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Ատենադպիր Սարգիս Ճէպէճեան, որ կը վարէր Ընդհանուր Ժողովը:

Ողջոյնի խօսքերէ ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տուաւ իր Օրհնութեան Խօսքը՝ Ընդհանուր Ժողովին մաղթելով յաջող եւ արդիւնաւոր ընթացք, ինչպէս նաեւ շեշտեց Հ.Բ.Ը.Մ.-ի կարեւոր դերը հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Ինչպէս միշտ, պաշտօնական օրակարգը կ'ընդգրկէր 2018-2019 տարեշրջանի ընդհանուր նիւթական տեղեկագրութիւնը, զոր ներկայացուց Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի Գանձապահ Նազարէթ Ֆրսթըքճեան եւ նոյն տարեշրջանի բարոյական տեղեկագիրը Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ եւ Փոխ-ատենադպիր Արտա Յարութիւնեան: Կրթութեան ասպարէզին մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի կատարած աշխատանքը, մասնաւոր Հայկական Համացանցային Համալսարանի հսկայական ներդրումը հայ

կրթութեան մէջ, հիմնադրումէն ի վեր անցնող տասը տարիներու ընթացքին, ներկայացուց Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Լենա Սարգիսեան: Կարճ հարց ու պատասխանին յաջորդեց քննարկում հարցերու շուրջ, զորս նախքան ժողովը ներկայացուած էին անդամներու կողմէ:

Գաղտնիք չէ, որ հրապարակում կամ փողոցում գիշերող ընդգիմազիր յորջորջուողները գաղափարական ոչ միայն նոր ասելիք չունեն այլեւ կոկորդ են պատուում, երկրորդ նախագահի ցուցմունքները կատարելու, որ այնքան է վստահ, որ նոյնիսկ մոռանում է իր թաւանի անփառունակ անցեալը եւ յայտարարում, որ եթէ ինքը լինէր երկրի ղեկավար՝ պատերազմ չէր լինի: Լրբութիւն է այս, թէ ծաղրանք հասարակութեան հանդէպ, մի գուցէ կլորիկ աւարի վրայ նստած դարձել է հակուր եւ իրեն ապահով է զգում մոռանալով 98-ի խարդախութիւնները, Հոկտեմբեր 27-ը եւ Մարտի մէկը՝ բազում այլոց կողքին, իսկ նրա կրկնօրինակ յաջողող իր վարպետից հեռու չէ եւ հանդուրժում է, անմեղ հրեշտակի տեսքով, խեղաթիւրել անցած քսան տարիների իրենց ստեղծած դժոխքը, զանց առնելով, որ այդ ժամանակահատուածում քայքայեցին հասարակութեան բարոյականը, կաշառք գործեցակերպ դարձրին, 5+2 տարածքները գիշերու բանակցութիւններ վարեցին եւ այսօր երեք ամիս է անդադար շահարկում են մեր անմեղ գոհերի յիշատակը, որ մեր բոլորի ողբն է, իսկ իշխանութեան վերագրաւելը

հիմնական նպատակ: Խ ու ժ ա ն ա վ ար ու թ ե ա ն սկզբունքներով գործելով եւ, հասարակութեան վիշտը ոտնահարելով անդադար դաւաճան եւ հրաժարական գոռալով, փորձում են իրենց մեղքի բաժինը մոռացութեան գիրկը նետել, մինչ նրանց արժանաւոր մեղսակից վանեցեանը յայտարարեց, որ եթէ ինքը վարչապետ լինի երեք օրուայ ընթացքին բոլոր գերիներին տուն կը դարձնի: Ի՞նչ անուն տանք՝ երբ ոմն մեր գերիներին փրկելու հնարաւորութիւն ունի, բայց չի գործածում՝ իրականում լիբը դաւաճան է կամ ստախօս: Այս է փողոցի մեր ցուցարարների՝ իմա վարչապետի թեկնածուների բարոյական կերպարը եւ առաւել ողբալին այն է որ այս աղմկարար խմբակները չունեն ծրագրի նմանուող որեւէ առաջարկ, բացի իշխանութիւն գրաւելու մոլուցքից, որպէսզի կարողանան անցեալի բոլոր կեղտերը ծածկել եւ շարունակել նախկին գործը:

Այսուհանդերձ մի անհանգստացնող միտք յաճախ է յղանում ու մզմզում ուղեղիս մէջ, թէ արդեօք մեր ազգային գիտակցութիւնը եւ վերապրելու բնազդը այնքան է թուլացել՝ իմա անհետացել, որ չենք կարողանում զանազանել ճիշտը՝ սխալից, դրականը՝ բացասականից, դաւաճանութիւնը՝ նուիրումից, կեղծը՝ արդարից եւ երբեմն ընկնում ամբոխավարութեան եւ ինչ որ տեսակի քարոզչութեան թակարդը: Եթէ, ոչ հեռաւոր անցեալին դա՛ պետական սկզբունք էր եւ ելքի հնար չկար, ապա վերջին տասնամեակներին այն կատարեալ կլանային բռնապետութիւն էր, աւազակային սկզբունք եւ այսօր այդ կացութեան հեղինակներին հետեւող եւ ծափահարողները կան: Իրականութիւնը որքան ցաւալի նոյնքան անբնական եւ անընդունելի է:

Դժոխային պարտութիւնը իր հետեւանքներով ծանր բեռ է մեր բոլորիս ուսերին, պարտութիւն կրել ենք ազգովին, իւրաքանչիւր հայ այդ չարիքի մասնակից եւ պարտաւոր է ուշքի գալ, արթնանալ բոլոր տեսակի հեռորաբանութեամբ թմրեցնող քայլերից եւ ուշիմ ու առողջ գիտակցութեամբ լծուել երկրի հիմքերը վերակառուցելու երկար եւ դժուար աշխատանքին, որ պիտի լինի այսօրուայ ունեցածի հակադիր պատկերը: Մեզ հեռու են պահել մեր իրաւական կեցութիւնից սուտ ու կեղծիք մատուցելով, երկրի նոյնիսկ չափաւոր գանձը բաժանելով մի քանի արտօնեալ ընտանիքներին միջեւ եւ այդ վիճակի կարօտախտով տառապողներն են որ կրկին ցանկում են վերադառնալ՝ հուսկ տեղի ունեցող ցոյցերը: 25-2-ի կոչի վերջին հաւաքոյթը ապացոյց էր, որ բնակչութեան զգալի մասը մերժում է նախկիններին: Մի փոքր իրատեսութեան դէպքում, դժուար չէ զանազանել դաւաճանը եւ նուիրեալը: Բացայայտ է, այսպէս երկար շարունակել չի կարելի: Պարտաւոր ենք վերափոխուել:

«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

կեանքի արժէք եւ այդ արժէքին հետ ապրելու գրաւական: Ասոր համար է որ անհրաժեշտ է հողը պահել եւ անոր տիրութիւն ընել: Այս ոչ միայն Հայաստանի եւ Արցախի հայուն համար, բայց

«Եալլա Պայ»



ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

«Եալլա պայ» եւ ասոր նման ուրիշ բազմաթիւ օտար բառեր եւ բառեր: Այսպէս «օ քէյ»-ն սկսեալ մինչեւ «թանք եռ», «սօրի», «շուր» «ուլթ» «նօ ուէյ» «այ թինկ», «եռ նօ», եւ տակաւին շարքը երկար է: Այսպէս, գաւակ, թոռնիկ, ծնողք, դրացի, զարմիկ, բարեկամ կամ խնամի, աշակերտ, միութենական կամ առեւտրական, դուք ձեզի հարցուցէ՛ք, թէ ինչպէ՞ս եւ ե՞րբ կը գործածէք այս բառերը:

Անկեղծօրէն բոլորս ալ այս բառերը, իբրեւ սովորական եւ բերնի ծամօն, կը գործածենք զիտակցաբար եւ կամ՝ անզիտակցաբար: Կը գործածենք, կարծես մեր շրջապատին ցոյց տալու, թէ. - «Տեսէ՛ք, ես անգլերէն ալ գիտեմ...»:

Պէտք է նշել, թէ այս յիշած բառերս դիւրին հնչուող են, եւ հաճոյալի ալ են, միավանկ, կարճ ու սահուն, ու համայն աշխարհի մարդկութեան հասկնալի: Ծատերուն համար այս բառերու սովորական գործածութիւնը կարծես տեսակ մը իրենց անձին «շուք» կու տան, անգլերէն «գիտ-ցողի» հովերէն քշուած: Բայց չմոռնանք, որ այս նշուած բոլոր բառերուն հայերէններն ալ կան: Նորէն, դուք գիտէ՛ք:

Սակայն ինչո՞ւ այս յառաջաբանը, ըսե՛մ որովհետեւ 21 Փետրուարը «Մայրենի Լեզուի Օր» նշանակուած է: Այդպէս որոշուած է: Հպարտութիւն բուրոյ տօն ալ է: Անոր համար, երբ թուականն ու առիթը յիշեցի, անհանգիստ ջիղ մըն էր, որ յանկարծ սկսաւ տրոփել մտքիս մէջ: Նաեւ ըսեմ, որ նոյն այս թուականն է, որ իր հետ բերաւ զանազան հարցեր եւ խնդիրներ, որոնք թէեւ նոր չեն, բայց հաւատացէ՛ք, տազնապալի են, իրենց արդիւնքներուն նման:

Անկասկած, շատ շատերու մօտ այս բոլորը նոր բացուած արշալոյսի նման կը մտնեն իրենց կեանքին մէջ, արեւի գոյնին նման պայծառ: Ահա թէ ինչո՞ւ յաճախ ալ հոգեպէս տառապանք հագած կ'ապրին: Այս եւ նման բառերու արտասանութեամբ կարծես նոյնիսկ մեր մտքի բանալին կորսնցուած ըլլանք: Ահա մտահոգութիւնը: Տեսակ մը մեծամտութիւն: Երբեմն պարտաւոր ենք նման «բաներ» հրապարակային հնչեցնել:

Ինչո՞ւ սակայն: Որովհետեւ հայ ենք եւ Սփիւռք կ'ապրինք: Ուստի յստակ եւ տեսանելի է, թէ ինչպէս սկսած ենք մաշիլ: Միւս կողմէ նաեւ ըսեմ, որ դժբախտ ազգ ալ ենք, մեր երկրին պէս եւ

մեր ներկան մեր աչքին առջեւ իսկ հսկայ վիհ մըն է: Այս է մեր ճակատագիրը: Բայց...:

Տխուր եւ հաստատ ըսեմ. բոլորս ալ շուրած կը նայինք մեր այս ճակատագրի աչքին որովհետեւ մենք գոհ ենք, բայց նաեւ մտահոգ ենք, այս անբնական կացութեան դիմաց: Արեւելքի միւս ժողովուրդներու նման մենք մոլեռանդ ազգ չենք: Սակայն այս բոլորը խորունկ եւ շօշափելի կը զգանք:

Եւ տակաւին աւելցնեմ, որ Արցախեան պատերազմն ալ եկաւ իր խիստ խօսքերով ու մահացու, քանդեց մեր կորովը, վիրաւոր մեր երազներուն հետ: Անոր համար մշուշ բռնած է մեր ուղեղները եւ զայն խստօրէն պաշարած: Օտար աղմուկներու մէջ եւ ամէն տեղ սկսած ենք ծերանալ: Յստակ է, թէ ապրումը գիշած է մեր խոհին, ու Սփիւռքեան մեր ապրած երկիրներէն ներս տեղական լեզուները, նոր գոյն եւ տարբեր գիծ տուած են մեր խօսակցութեան եւ մայրենիի հարազատութեան:

Չեմ փորձեր եւ ոչ ալ կ'ուզեմ, որ տողերս յարատեւ տազնապի երգեր դառնան: Բայց եւ այնպէս պէտք է պահպանել մեր մնացուն արժէքները, որոնց առաջին շարքին կու գայ մայրենի լեզուն:

Հայ զանգուածները կապելու միակ բանալին մայրենի լեզուն է. կը կրկնենք շարունակ: Բոլորս ալ լաւատեղեակ ենք եւ սակայն յաճախ ալ անոր հետ անհոգ կը վարուինք: Կարծես ան մերը չէ: Օտարին է: Մեզի համար՝ անծանօթ: Տեսնուած է, որ յաճախ ալ դիմագուրկ կ'ապրինք:

Քաջութիւն է պէտք ցեղին հայելիին մէջ դիտելու: Ամերիկայի մէջ հայ մնալու գաղտնիքը պէտք է, որ գիտնանք:

Ուստի հայ միտքը պէտք է ազատել օտար եւ «վնասակար» փշրանքներէն: Գիտակցելու գորութիւնը ունենալ է պէտք: Հակառակ մեր շուրջը տիրող եւ փոխուող արագ իրողութիւններու, մեզի կ'իջնայ մեր նոր սերունդը հայրենի մթնոլորտէն չզրկել:

Երբ շատերու բերնէն մաքուր հայերէնով արտայայտութիւնը կը լսեմ, հիացումս կ'երթայ:

Յաճախ գմայլանք մը ունիմ: Հաւանաբար շատ բան կայ այս մասին գրելիք եւ խոսելիք:

Նաեւ աւելցնեմ, որ մեր պատմութեան անիւր ծռած է: Ուստի հաստատ կամք է պէտք: Դրական մօտեցում: Ճիշդ է, որ մեր լեզուի նահանջի ներկայութիւնը կ'ապրինք, ականատեսներ ենք արդէն, ուստի ամէն օր եւ ամէն առիթով անոր մաքուր գործածութեան հանդէպ անտարբեր պէտք չէ որ մնանք

Հարցում Մը Ու Պատասխաններու Աստղահոյլ

«Վաղ արթնացիր, սերմնացան-այս պատուէրը հմուց քեզ տրուած է Բայց ունի՞ս աչքեր սրատես, որ մթնում հերկերը տեսնես» Ե.Չ.

ՍԱՐԳԻՍ ՓՈՇՕՂԵԱՆ

Կ'ապրինք սա կեանքը արեւուն տակ իսկ կան հունտերը մութին ու հարցումներ կը ծագին: Ի հարկէ հոս մեր գործը սերմնացանի հետ չէ այլ՝ ընդհանուր է, հասարակութեան է, պետութեան է:

Հարցում մը ու պատասխաններու աստղահոյլ մը կը բացուի մեր դէմ: Ապա կը սկսի երկրորդ բարդութիւնը՝ կարենալ ընտրելու՝ եւ ինչ որ կը գոհացնէ զթա՛յլ վայրկեանին ու յոյսով՝ որ պիտի գոհացնէ նաեւ զալիք օրերու մէջ, երբ ուրախութիւնը կախեալ է իրողութենէ մը՝ որուն կը սպասէիր. Ուրախութեան առաջին քայլը երբ ա՛յլ ուրախութեան եթէ կ'առաջնորդէ կը մնայ վիրաւոր ու մանաւանդ՝ կրնայ վերածուիլ տառապանքի ու անցեալը նոյնիսկ առիթ կը դառնայ սակայն օգուտը ի՞նչ է. ինչ որ եղած է անյեղի է քանի որ ժամանակի անիւր ետդարձ չունի: Հետաքրքրական եւ օգտաշատ օրինակ մը տանք Պուտտիստական վարդապետութենէ:

Թիպէթցիները, որոնցմէ հաճոյախօսութիւնը առատ է, կը նկարագրէ կարեւորութիւնը ոգելից ըմպելիներէ հեռու մնալ հե-

տեւեալ գուարճալի անեքթոտով:

Պուտտիստական Դաւանանքի անդամներէն մին, Հրէշի մը կողմէ կը պարտադրուի գործադրել Պատուիրանի հակառակ գործարք մը, հետեւեալ երեք արգիլուածներէն մին կատարելու ի՛ր ընտրութեամբ, այժ մը սպաննել. Սեռային յարաբերութիւն ունենալ կնոջ մը հետ, եւ կամ՝ ոգելից ըմպելի ընդունիլ: Խոր մտածումներու յանձնուելէ ետք Պուտտիստ կ'եզրակացնէ թէ վստահաբար այս երեքն ուսուցագոյն մեղքը արգիլուած ըմպելին է, ու կը կատարէ: Գլուխը կը լեցուի, կ'ամպոտի ու բնականաբար կիրքը կը բորբոքի ու կը կենակցի կնոջ հետ: Ապա, հաճոյալի թուալու համար իր տարփուհին, կը մորթէ այժը: Ընթրիք:

Այսպիսով սխալ է մը յառաջացան այլեր ու Հրէշի նպատակը իրագործուեցաւ Պուտտիստը առաջնորդելով երեք մեղքերու:

Ունի՞ս աչքեր: Օր ցերեկով լոյսի հագուստով խաբուսիկ խաւարները տեսնելու, կարենալ գատորոշելով իրարմէ սպիտակն ու սևը: Եղի՛ր Թագաւոր: Քանզի դժուար է ուղին երբ անյայտ է թշնամին, զիշերուան մէջ մթաստուեր կամ ցերեկով լուսաշող:

կամ ըլլանք: Ճեղք մը կայ հայերէն լեզուի պարզ սովորական խօսակցութեան եւ մաքուրին միջեւ: Ժամանակն է, պաշտպանել լեզուի իշխանութիւնը որպէսզի ան դառնայ թուրք եւ մտածում: Այս մէկը կը սկսի տուններէն հասնելու անմիջապէս հայ դպրոցին եւ հայ ակումբ-կեդրոնին ու միութենական կեանքին:

Ուստի խորապէս կապուինք մեր լեզուին սիրենք եւ պաշտպանենք: Պահենք եւ գործարարք:

Այս կը նշանակէ մեր ապրելու եւ գոյատեւելու միջուկը բազմացնել: Լաւ յիշենք, որ մեզմէ շատ շատեր հայութեան աղմուկէն հեռու կ'ապրին, զանազան պատճառներու ետին պահուելով: Օտար լեզուն է տիրապետողը եւ որ աղետալի հետեւանք կը ձգէ մեր եւ մեր մշակուցի վրայ: Չեմ խօսիր հայրենիքի մասին: Հո՛ն, պապենական երկիր է: Հո՛ն, մեր երկիրը իր տէրը ունի, որ հայ ժողովուրդն է: Հո՛ն, հող կայ, դարերու պատմութեամբ եւ մշակուցով: Ահա սեփականութեան հրճուանքը: Ուստի այս խօսքս կամ մատնանշումս հասցէագրուած է մեզի, Սփիւռքի մէջ ապրողներու, զաւակներէս, թոռներէս եւ հարազատներէս սկսեալ, մինչեւ համայն հայութեան:

Յիշենք այս առիթը Շահան

Շահանուրի մտահոգ տողերը. -

«Սփիւռք դարձած հայերս, պիտի սկսինք կամաց-կամաց մոռնալ մեր լեզուն: Լեզուն կորսնցնելով մեր կոնակը պիտի դարձնենք հայուն մեծագոյն գանձին՝ մեր մշակութային արժէքներուն»:

Նաեւ յիշեցնեմ Պարոյր Սեւակի մտածումներէն բաժին մը. - «Օտար բառեր գործածելով ոմանք ուզում են կրթուած կամ իբրեւ ժամանակակից երեւնալ»:

Լեզուն պահպանելու ահաւոր այս բեռը կ'իջնայ նախ հայ ծնողքին եւ հայ դպրոցին եւ հայ ուսուցիչին վրայ: Յաճախ կը տեսնենք եւ կը լսենք, թէ հայ լեզուն մեզմէ դուրս է: Կարծես մերը չէ: Անտէր ձգած ենք զինք: Որք եւ աղքատ: Ուստի զայն ներգրաւելու միջոցներու անմիջական կարիքը պէտք է որոնենք: Եւ կը կարծեմ, որ լաւագոյն դեղատոմսը՝ իրարու հետ հայերէն խօսիլն է: Հայերէն գիրքեր կարդալն է: Այլապէս պարտութեան կը մատնուինք, եւ ձուլումը կը յաղթանակէ: Եւ այն ժամանակ՝ վա՛յ եկեր է մեզի...:

Բացառութիւնները ներքի ու հասկնալի են: Իսկ եթէ իրապէս կ'ուզենք հայրենի ապրիլ, մենք պէտք չէ որ մեր դէմքը, մեր ինքնութիւնը, մեր լեզուն փոխենք: Որովհետեւ, հաւատացէ՛ք, կ'այլափոխուինք: Պարտաւոր ենք մնալ հայ:

Եւ եթէ կամքը կայ, մեր բոլոր ճիգերը ապարդիւն չեն:



Կեանքն Իմաստաւորած Գործիչը (Խեչուն Խեչունեանի մահուան տխուր առիթով)

Ռ. ԿՈՐԻԻՆ

Երբ մահուան գոյժ է տեղեկացուում, տիրում ենք, ցաւում ենք, որ մէկ հոգի մեզանից բաժանուեց, ֆիզիկապէս մեզանից հեռացաւ ընդմիջտ, այն էլ ինչ՝ նուիրուած մի մարդ, որը երկար տարիներ մեր թեհրանահայ համայնքում լուսահոգի Արտակ Արք. Մանուկեանի առաջնորդութեան տարիներում եւ ներկայ առաջնորդ Սեպուհ Արք. Սարգսեանի օրօք իր սիրալոյսով եւ անվերապահ ծառայութիւնն էր բերում համայնքին, մեր եկեղեցուն եւ ազգային դրուածքի աշխատանքներին:



տեւում են խմբական եւ անհատ ազգայինների գոհողութիւններով, սիրալոյսով բերելով իրենց ծառայութիւնները տարբեր բնագաւառներում՝ միութեանակաւ, մշակութային, եկեղեցական, կրթական եւ հասարակական:

Իմ ծանօթութիւնը պրն. Խէչունի հետ սկսուած է 1979 թուից, իրանի իսլամական յեղափոխութեան առաջին տարին: Այս թուականին Թեհրանի Հայոց Թեմական Խորհուրդը մտահոգուելով յեղափոխութեան յետագայ յղի իրադարձութիւններից «Կարիքաւորներին օժանդակող» յանձնախումբ է կեանքի կոչում, եթէ չսխալուեմ՝ տասնմէկ անդամներից բաղկացած, կազմի անդամներից էինք՝ նուաստս, պրն. Խէչուն, Շաւարշ Ղազարեան, Սուրէն Սարգսեան, Երուանդ Զամանի (հանգուցեալ) եւ ուրիշներ: Յանձնախումբը յետագային դասուեց Թեմական Խորհրդի յարակից մարմիններից մէկը, որը մինչեւ օրս աշխատանք է տանում նիւթապէս օգնելով կարիքաւոր ընտանիքներին: Անդամներից Ռուբէն Քելիշեանը եւ Երուանդ Զամանին ուսուցիչներ էին:

Յաճախակի հանդիպումները յանձնախումբի գործերով կազմի անդամների մէջ ջերմ կապեր էին հաստատուել ի ծառայութիւն կարող եւ անհատներին եւ ընտանիքներին պարէնի բաշխումով եւ նիւթականի յատկացումով: Պրն. Խէչունի ներկայութիւնը յանձնախումբում առաջնորդի դեր էր կատարում իր առաջադրող խորհուրդներով: Նրա ընտրութիւնը յանձնախումբում մտածուած էր նկատի առնելով իր ազգային եւ հասարակական անցեալը: Յանձնախումբի աշխատանքները շնորհիւ ընկերակաւ սրտամօտ կապ ստեղծուեց մի քանի հոգու միջեւ պրն. Խէչունի հետ միասին, համեստ կեր ու խումի ընկերակաւ հանդիպումներ տարբեր առիթներով, ուր առաւելաբար համայնքային անցողարձն էր քննուած թեր եւ դէմ տեսակէտներով: Պրն. Խէչուն մեր համայնքային ազգային դրուածքի եւ կատարուած գործերի պաշտպաններից էր ամուր ռզով հաւատարիմ:

Պրն. Խէչուն մարդկային գովելի բարեմասնութիւններով էր օժտուած, ծանօթ ու անծանօթ դէպի իր կողմ էր ձգում իր առականերով համեմուած ասոյթներով, խրատներով եւ յորդորներով: Երկար տարիների ընկերութեան, բարեկամութեան եւ թաղեցի լինելու հանգամանքով ակնատեսան ու վկան ենք եղել ազնիւ, համեստ եւ ազգասէր հոգեվիճակի, վարք ու վերաբերմունքի դրսեւորումներին, նա

շատ ուսեալ մարդկանցից առաւել հոգով ու մտքով լեցուն ու բանիմաց էր, եթէ նրանք գրքերից էին ուսում ստացել, նա կեանքի յորձանուտից անցնելով դարձել էր ատոք հասկ, դրանով հանդերձ որ հազիւ գիւղական մի քանի տարիների ուսում էր ստացել:

Նա մեր արժանաւոր ժպտադէմ հայեացքով, սեւաթուր աչքերով, գանգուր մագերով, վայելչադէմ կազմուածքով ընկերն էր՝ համաբաւառացին, իր պայծառ լաւատեսութեամբ: Նա Բուրվարի գաւառի ծնունդ էր 1939 թուին, գիւղից Թեհրան քոչելով մի որոշ ժամանակ ապրում են Ալպուլաղում, ապա տեղափոխուում են Թեհրան, նա փոքր տարիքից կորցնում է հօրը, հայրը՝ Շահբազ, մայրը՝ Նարգիզ, երկու որդիների եւ չորս դստերի ծնողներ: Նրանք իրենց մօր անմիջական շունչի եւ հովանու ներքոյ են մեծանում: Պրն. Խէչուն գիւղական վարժարանի ուսում է ստանում, անհէր պատանի ստիպուած գործի է անցնում: Նա կեանքի դժուարին օրերը յաղթահարում է աշխատասիրութեամբ եւ հնազանդութեամբ, ուշիմութեամբ եւ խելամուտութեամբ տիրապետում է կառուալաշինութեան արհեստին եւ յետագային գործարան է հիմնում տասնեակ գործաւորներ աշխատացնելով: Պարտաճանաչութեամբ, ճշտապահութեամբ եւ հմտութեամբ մեծ յաջողութիւնների է հասնում իրանի պետական հիւանդանոցների հետ վաճառքի պայմանագրեր կնքելով եւ աշխատելով:

Պրն. Խէչունի ջանքերով եւ ծախսերով եղեռնի յուշարձան է կանգնեցում Սրբոց Թարգմանչաց եկեղեցու բակում: Նա ամուսնանալով օր. Մարգարէտ խորհրդակցութեան հետ բարխտաւորում են երկու որդի եւ մէկ դուստր գաւակներով: Զաւակները ամուսնացած են ունենալով շնորհալի երեխաներ՝ յաջող եւ աւանդապաշտ ընտանիք բարեկեցիկ կեանքով: Նա ոչ կանոնաւոր ուսմամբ, սակայն օժտուած էր բարձրորակ ուշիմութեամբ, յիշողութեամբ, ողջամտութեամբ եւ փորձառութեամբ:

Երբ 2018-ին գտնուում էի Թեհրանում, որը գուզադիպել էր Արամ վեհափառի հովապետական այցելութեան, ի պատիւ կաթողիկոսին հիւրասիրութիւն էր կազմակերպուած «Սիփան» միութեան «Նայիրի» սրահում հիւրերի հոծ ներկայութեամբ, նուաստս հրաւերով ներկայ էի, հանդիսութեան հանդիսավարն էր պրն. Խէչուն, նա խօսքատեղեակ արտայայտութիւններով հանդիսավարեց երեկոն բարեյաջող ընթացքով եւ ւսարտով, յաճախ էր այդպիսի հանդէսներ հանդիսաւորում:

Ահա արժանաւոր մարդը, ափսոս որ շուտ հեռացաւ կեանքից,

նրա գոյութիւնը մեծ յոյս եւ ապաւէն էր գաւակների եւ շրջապատի համար, նրա բացակայութիւնը մեր կեանքից դեռ շատ ու շատ ժամանակ զգացուելու եւ լիշուելու է անմոռաց:

Հանգուցեալի տղան՝ Հենրիկի բացատրութեամբ՝ երբ առաւօտեան այցելում է ծնողի բնակարանը, հօրը գտնում է մահճակալի մէջ մահացած ձեռքը գլխատակը, նրա ցանկութիւնն է եղել առանց ցաւի ու հիւանդութեան հոգին աւանդի, այդպէս էլ կատարուեց իր ցանկութիւնը 2021 թ, 20 փետրուար, շաբաթ առաւօտեան: Թաղումը կատարուեց սահմանափակ յուղարկաւորներով պակասճահր ախտավարակի (Covid-19) պատճառով: Այս վարակի բռնկումն ու տարածումը մեծ աղէտ ու պատուհաս դարձաւ աշխարհի ժողովուրդներին համար, արդէն մէկ տարուց աւելի դեռ նա աւեր է գործում ընտանիքներին սուգի մատնելով: Եթէ պայմանները տարբեր լինէին անկասկած պրն. Խէչունի դին հողին յանձնուելու յուղարկաւորութիւնը պիտի տեղի ունենար եկեղեցական արարողութեամբ եւ ժողովրդական բուռն մասնակցութեամբ, քանզի նա սիրուած եւ չարգուած էր շնորհիւ իր անսակարգ ծառայութիւնների համար:

Կարգալով առաջնորդ Սեպուհ սրբազանի մահախօսական գրութիւնը պրն. Խէչունի վշտալի մահուան առիթով զայն գտայ եղելութեամբ հարազատօրէն ներկայացուած, որից ներքոյ հատուածը ստուգապէս բնութագրում է պրն. Խէչունի սրտով - հոգով նուիրուածութիւնը քաղաքամասի բնակչութեան՝

«Մի պահ մտածել, որ «Սասուն» քաղաքամաս ես գնում եւ այնտեղ պիտի չգտնես այդ քաղաքամասի շունչն ու ոգին հանդիսացող, քաղաքամասի բնակիչների՝ մեծի ու փոքրի բարեկամը, միութիւնների, դպրոցների եւ ընտանիքների սրտցաւ հայրերին՝ Խէչունի մեծագոյն բաժինը նոյնացուցած էր «Սասուն» քաղաքամասի կեանքի հետ, խոր ցաւ ու ափսոսանք ես ապրում:

Կանուխ էր պրն. Խէչունի հրաժեշտը կեանքին, Նախախնամութեան կամք, շատ-շատեր պիտի կարօտեն նրա ճշմարիտ եւ անկեղծ հայ մարդու խօսքին, վարք ու բարքին, արարքներին ու շփումներին: Մեզ մնում է նրա յիշատակը պայծառ եւ անմոռաց պահել, նրա կեանքից ծառայութեան օրինակներ քաղել:

Մեծ է Խէչունեան ընտանիքի կորուստը, ցաւակցութիւններ, համբերութիւն եւ սփոփանք ենք հայցում:

Յիշատակն արդարօրէն օրհնութեամբ եղիցի:

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com

**Գործակցութեան Զրաշալի Օրինակ
Մելիքն Էլեան, Զուրի Խեչումեան, ԶԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի
3-րդ դասարանցիներ եւ Artsakhsnvehr.org
Արցախի Զերոս Զայուհի. «Մենք Լաւ ենք, Ուրիշի Օգնէք»**



Լոս Անճելըսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի 3-րդ դասարանի աշակերտութեան ու անոնց ծնողներուն շնորհիւ, եւ դեկտեմբերին բազմամասնակ դաստիարակ-ուսուցչուհի Տիկին Հուրի Խեչումեանի, աւելի քան 40,000 տոլար հանգանակուած է մինչեւ օրս՝ Արցախի իրենց քոչըրներուն ու եղբայրներուն համար: Կապող օղակը նուիրեալ այլ տիկին մըն է, նոյն վարժարանի նախկին ծնողք Մելիքն Էլեանը: Անոր բարեսիրական կազմակերպութեան միջոցով անցնող չորսհինգ ամիսներուն ընթացքին գործակցութեան հրաշալի օրինակով մը հրաշք կը գործեն 9-10 տարեկան տղաքն ու աղջիկները:

Զրուցակիցներս խանդավառութեամբ կը ներկայացնեն այստեղ՝ Լոս Անճելըսի, եւ հոն՝ Հայաստանի ու Արցախի մէջ կատարուող աշխատանքները: Ցաւին մէջ ուրախութեան, լաւատեսութեան, ապագային հանդէպ բարեկամեցողութեան նշույլ մըն է անոնց կատարած գործը, որ նիւթական օժանդակութեան հաւասար եւ աւելի շարժում մըն է արթուն պահելու մեր մատղաշ սերունդը, կապելով զանոնք հող-հայրենիին հետ:

Շուշիի մէջ մեծապէս նպաստած է կառուցելու ազգային գրադարանի շէնքը: Ան է պատմողը. «Վերջին 1-2 տարիներուն, թէեւ դժուարութիւններ կային համավարակի հետ կապուած, սակայն երբ այցելութեան հնարաւորութիւն եղաւ, մեկնեցայ Հայաստան: Երեւան կը գտնուէի արդէն ամիս մը, երբ Սեպտեմբեր 2020-ին պատերազմը սկսաւ: Երկու օր ետք ծրագրած էինք մեկնիլ Արցախ...»:

Մեր երկրորդ գրուցակիցը երուսաղէմահայ Հուրի Խեչումեանն է: Փոքր հասակէն ընտանիքին հետ գաղթած է Թեմիշարի, ապա անցնելով Լոս Անճելըս, Քալիֆորնիա: ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի 3-րդ դասարանի դաստիարակը նաեւ նոյն դպրոցի նախկին ծնողք է: Թող շարունակէ Հուրին.

Հուրի Խեչումեան. Արցախէն փախուստ տուած ընտանիքները հասած էին Սեւան քաղաք: Մելիքն Դիլիշանի մէջ տարածուած տեղ մը վարձելով, այդ ընտանիքները կը պատսպարէ հոն. լրիւ իր անձնական միջոցներով: Մեր գործակցութիւնը սկսաւ, երբ այդ փախստականներու եւ անոնց փոքրիկներուն մասին տեսանիւթ մը դիտեցի: Աստուած իմ, զանոնք նմանցուցի



Արմատները կը կանչեն: Եւ այդ էր եղած պատճառը, որ իրան ծնած, Եւրոպա անցած եւ Միացեալ Նահանգներ հասած առած այս բարեհամբոյր տիկինը, որուն անունն է Մելիքն, ընտանեկան յարկի տակ ստանալով ազգային դաստիարակութիւն, տասնհինգ տարի շարունակ կ'այցելէ Հայաստան:

3-րդ դասարանի աշակերտներու... եւ անցանք գործի: Մէկ կողմէն Մելիքնն է միւս կողմէն Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի 3-րդ դասարանի աշակերտներս՝ իրենց ծնողներուն սիրայօժար մասնակցութեամբ, անցանք գործի: Առաջին ծրագիրը կոչիկներ նուիրելն էր: Աշակերտներուս ներ-

կայացուցի Արցախի անցեալի պատմութիւնը եւ ներկան: Խանդավառութիւնը մեծ էր: Իւրաքանչիւր աշակերտ իր տան գործերուն օգնելով պիտի աշխատէր կէս ժամ, գրէր այդ մասին եւ ծնողքէն անոր դիմաց օրական երկու տոլար պիտի ստանար: Երկու շաբաթ ետք գումարը 30 տոլարի պիտի հասներ: 10 օր անցած էր, երբ մեր աշակերտները եւ արցախցի գաղթական երեխանները իրարու հետ կապեցինք հեռակապով (Zoom): Ծրագիրը ներկայացուցի մեր վարժարանի տնօրէնուհի Տիկ. Արփի Աւանեսեանին, Նախակրթարանի հայոց լեզուի համադրող ուսուցչուհի Տիկ. Մարալ Ոսկեանին եւ հայերէնի միւս ուսուցչուհիներուն: Հոկտեմբերի երկրորդ շաբաթն էր, 47 աշակերտները Հայաստանի դրօշակներով եւ գարդերով, իրենց ծնողներուն հետ միասին կապուեցանք Երեւան ու Դիլիշան՝ Մելիքն Էլեանի եւ արցախցիներու հետ: Այդ օր, Zoom-հանդիպումին շնորհիւ 12,000 տոլար խոստում ստացանք 3-րդ դասարանի ծնողներէն:

սարանէն: Պատերազմի աւարտէն ետք, երբ գաղթական ընտանիքները վերադարձան իրենց գիւղերն ու քաղաքները, մենք պահեցինք կապը անոնց հետ:

Մեր ծրագիրներուն կարեւորագոյններէն է արցախցիները աշխատանքով ապահովելը: Տամ քանի մը օրինակ միայն: Նուիրատուութիւններու շնորհիւ, մեր կազմակերպութիւնը հայաստանեան արտադրութեան ձեռնարկին 300 վերարկուներ գնեց եւ նուիրեց արցախցիներու: Ներկայիս երեք տիկիններու բուրդէ թելեր տրամադրած ենք, որպէսզի գործեն եւ ապա վաճառեն մեզի: Պուպրիկներ պատրաստել կու տանք, որոնցմէ մէկական հատ կը յանձնենք հովանաւոր ընտանիքներուն հոս՝ Լոս Անճելըսի մէջ: Եւ նման այլ ծրագիրներ:

Հ. Խեչումեան. Պատերազմը դադարեցաւ, բայց չենք կրնար մեր օգնութիւնը դադարեցնել: Չենք կրնար այդ ընտանիքները լքել:

Այն հարցումին, թէ ինչպէ՞ս կը ստուգէք, եթէ ընտանիք մը մէկ այլ կազմակերպութեան է եւ օժան-



Որպէս յաջորդ քայլ, որոշեցինք, որ իւրաքանչիւր աշակերտ ձեռագիր աշխատանք մը պատրաստէ եւ ծախու հանենք: Այդ միջոցառումը տեղի ունեցաւ մեր բնակարանին առջեւ Հոկտեմբերի մէջ: Մեզի հետ էր Մելիքն Էլեան, եկած էին մեծ թիւով ծնողներ, բարեկամներ, Fox 11 հեռուստաընկերութիւնը: Քանի մը ժամուան ընթացքին շուրջ 10,000 տոլար հաւաքեցինք աշակերտներուն պատրաստած ձեռագիրները վաճառելով: Եւ միայն սկիզբ մը եղաւ այդ. որովհետեւ ընկերային ցանցերու միջոցով բարի լուրը տարածուեցաւ դպրոցական շրջանակէն դուրս եւս: Գումարը հասաւ շուրջ 45,000 տոլարի: Սկսանք գումարներ դրկել Հայաստան, ուր Մելիքն Էլեանին ներկայացուցիչները՝ Վրոյրն ու Գայիանէն կը գնէին ու կը բաշխէին հազարէ աւելի ձեռնարկ վերարկուներ, շապիկներ, ներքնագրեատներ, կոշիկներ: Եւ այս բոլորը 3-րդ դասարանին շնորհիւ:

դակութիւն կը ստանայ, Տիկ. Էլեան պատասխանեց.

Մ. Էլեան. Վրոյր Խաչատրեանը, մեր գործավարը, շատ արթուն է: Ան կ'այցելէ տուները եւ կ'արձանագրէ ինչ որ անհրաժեշտ է: Մեզի հետ երկար ժամանակ աշխատեցաւ նաեւ հոգեբան Գայիանէ Պետրոսեանը:

Խեչումեանն է դարձեալ. 40,000 տոլար կը կարծէք, որ շատ մեծ գումար է, բայց այդպէս չէ:

Մ. Էլեան. Ըսեմ, թէ այդ 40,000-ը ճիշդ ձեւով կը գործածենք: Գումարը հաշուարկուած կը ծախսենք: Մսխում չկայ: Մեր բոլոր ընտանիքները գրանցուած են մեր քով, մանրամասն տեղեկութիւն ունինք անոնց մասին: Այստեղ կ'ուզեմ յիշել արցախցի կնոջ մը խօսքը: Անոնք կ'ապրին Դիլիշանի մէջ, գաղթական ելած էին Արցախի առաջին պատերազմին ժամանակ: Իսկ այս երկրորդ պատերազմին, ամուսինը կամաւոր մեկնած էր ճակատ: Երբ օգնութիւն կը բաշխէինք, հերոս հայուհին ըսաւ. «Մենք լաւ ենք, ուրիշի օգնէք»:

Հ. Խեչումեան. Հաց թխելու, կարի գործարաններու, պուպրիկներու պատրաստութեան եւ նման այլ աշխատանքներու հնարաւորութիւններ ստեղծեցինք: Դեռ շա-

«Թրքա-ժեխա-Թալանչիական»

Շարունակուած էջ 2-էն

դա էլ երկար չի կարող տեւել, երկար շարունակուելու դէպքում ընդդիմութեան հաւաքները ինչ-որ մի պահից կը սկսեն դէպի մարում գնալ, եթէ հասարակութեան ընդդիմադիր հատուածը զգայ սովորական նախընտրական պայքարի ինքնակամ, որը դեռ շաբաթներ առաջ է նշմարուել:

Եթէ խօսուած ենք ընդդիմադիր գործիչների մասին, չենք կարող չանդադրաբար Սերժ Սարգսեանին ու Ռոբերտ Քոչարեանին: Նրանցից երկուսն էլ ունեն իրենց համակիրները եւ նրանց չհանդուրժողների մեծ բանակ, անկախ նրանից, թէ այդ մարդիկ պատրաստ են փաշինեանին ձայն տալ, թէ՛ ոչ: ՀՀԿ-ն որպէս ընդդիմադիր կուսակցութիւն՝ վատ չէր լինի, եթէ մասնակցէր առաջիկայ ընտրութիւններին, թէեւ կարծես, նրանք յստակ են յայտարարել, որ փաշինեանի կազմակերպած ընտրութիւններին չեն մասնակցի: Սերժ Սարգսեանը նշեց, որ քաղաքականութեան գործընթացների մասնակից է եւ յանուն ճշմարտութեան պէտք է արձանագրել, որ նկատուած է, որ նա չի խուսափում հայաստանեան լրատուական ողջ դաշտի առջեւ ասուլիսներով հանդէս գալուց, եւ անկաշկանդ ներկայացնում է իր դիրքորոշումները քաղաքական ցանկացած թեմայով:

Նոյնը չի կարելի ասել Ռոբերտ Քոչարեանի պարագայում: Նա նախընտրուած է «Թիմի» լրագրողների եւ համակիր փորձագէտների հետ գրոյցները, որոնք պարտադիր համաձայնում են նրա հիմնական քաղաքական գնահատականների հետ, նրա կողմից հնչեցուած ստեղծելիքն առարկուած: Օրինակ, վերջերս ղեկից 2020թ. Սեպտեմբերի 18-ին կայացած Ռոբերտ Քոչարեանի հարցազրոյցը երեք փորձագէտների հետ, քաղաքագէտներ՝ Ալեքսանդր Մարկարովի, Երուսանդ Բոգոյանի եւ «Գոլոս Արմենի» վերլուծաբան Ռոբերտ Մարգարեանի հետ:

Խօսելով ԼՂ հակամարտութեան կարգաւորման թեմայով, մասնաւորապէս՝ իր իշխանութեան տարիներին բանակցած կարգաւորման «Ընդհանուր պետութիւն» տարբերակի մասին, Քոչարեանը դժգոհեց, որ, երբեմն, այն «չարկուած է», եւ ոչ աւել, ոչ պակաս, ասաց հետեւեալը. «Նոյնիսկ չի եղել փաստաթուղթ, եղել է գաղափար մէկ էջի՝ կէս էջի վրայ նկարագրած»: Սա այն դէպքում, երբ կարգաւորման «Ընդհանուր պետութիւն» ոչ թէ գաղափարների փաստաթուղթ էր, այլ կարգաւորման կոնկրետ տարբերակ, եւ դա այն տարբերակներից է, որը հայաստանեան մամուլում ամբողջութեամբ հրապարակուել է: Բայց Քոչարեանը որոշեց թաքցնել իրականութիւնը, վստահ լինելով, որ իրեն չեն առարկի ներկայները, հասարակութեան «ժեխալին» հատուածը չի լինի, իսկ «էլիտար» համակիրները չեն համարձակուի խօսել խեղաթիւրուած փաստի մասին: Իրականում, «Ընդհանուր պետութիւն» կարգաւորման տարբերակը, որը կողմերին ներկայացուել է 1998թ. Նոյեմբերի 10-ին, 8 էջանոց փաստաթուղթ է՝ հայերէն թարգմանութեամբ, ռուսերէնով՝ 7 էջ (երկու դէպքում էլ՝ համակարգչային 12 տառաչափով):

Ինչեւէ, մեր տարածաշրջանի

համար ազդեցութեան դաժան պայքար է ընթանում՝ Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ, միւս կողմից թուրքիան է իր հաւակնութիւններով, որն էլ իր հերթին թէ՛ Արեւմուտքի, թէ՛ Ռուսաստանի հետ վարպետորէն խաղում է, շատ դէպքերում՝ նրանց հակասութիւնների վրայ:

Որքան էլ ընդդիմադիրները պնդեն, որ այսօրուած իշխանութիւնները Հայաստանը տանում են Արեւմուտք, ակնյայտ է, որ Փաշինեանը հիմա Պուտինից ամենակախեալ Հայաստանի ղեկավարն է, նրա նման կախեալ չի եղել անգամ Քոչարեանը, որը Ռուսաստանին է փոխանցել Հայաստանի ռազմավարական մի շարք օբիեկտները՝ «Գոյք պարտքի դիմաց» գործարքի շրջանակներում: Բայց յետպատերազմեան շրջանում Փաշինեանի կախուածութեան աստիճանը չի փոխուած նրա վերաբերեալ Ռուսաստանում առկայ տրամադրութիւնները. նրան շարունակում են չվստահել, ռուսական թէ՛ դաշնային, թէ՛ Կրեմլից անկախ լրատուամիջոցները, երբեմն ծաղրում են նրան, իսկ Փաշինեանի իսկանդերային չկառուարտուած յայտնի յայտարարութիւնից անմիջապէս յետոյ, ռուս յայտնի լրագրողներ, բլոգերներ կայծակնային արագութեամբ գործուղուեցին Երեւան՝ ընդդիմութեան հաւաքները լուսաբանելու: Այս օրերին էլ նրանք ուղիղ եթեր են դուրս գալիս, լուսաբանում ընդդիմութեան հավաքներն ու երթերը, երբեմն նոյնիսկ տեղեւորման ալիքներում անթաքուց «ցուցումներ» են տալիս Օնիկ Գասպարեանին, ինչն էլ լրացուցիչ ոգեւորութեան առիթ է դարձել վերջին մի քանի օրերին ընդդիմութեան հարթակից ելույթ ունեցողների համար:

Սակայն, յստակ է, եթէ այսօրուայ ընդդիմութիւնը դառնայ իշխանութիւն՝ Նոյեմբերի 10-ին ստորագրուած եռակողմ փաստաթուղթն, իհարկէ, չի պատուելու, շարունակելու է աշխատել դրա շրջանակներում, հետեւաբար ընդդիմութիւնն այս պահին, եթէ կարող է մի բան անել՝ դա պատերազմից յետոյ Հայաստան պետութեան թոյլ դիրքերը փոքր-ինչ ամրացնելն է, ոչ թէ՛ հակառակը: Առհասարակ, վերջին ամիսներին շատ է խօսուում այն մասին, թէ ճիշտ չէ, երբ ընդդիմադիրները մեր երկրի քաղաքացիներին անուանում են «ժեխ»: Եթէ մենք ունենք քաղաքական դաշտ, որտեղ նախընտրական պայքարը թէ՛ ժացնելու համար քաղաքական գործիչները միմիանց «թուրք» են անուանում, պէտք է պատրաստ լինեն, որ հասարակութիւնում լինելու են մարդիկ, որոնք մշտապէս հակադարձելու ու մատնացոյց են անելու մի իշխանութեան պատասխանատուի, որի օրօք Հոկտեմբերի 27 է տեղի ունեցել, այդ գործով վկաներ են փախել երկրից, Մարտի 1 է իրագործուել եւ այլն, հիմնաւորելով իրենց համոզումը, որ այդ գործիչն այսօր իրաւունք չունի որեւէ մէկին քննադատել ու հերոս ձեւանալ՝ անգամ փաշինեանի իշխանութեան ահուելի սխալների, ձախողումների ու տապալումների պարագայում:

Հայաստանեան քաղաքական դաշտը որքան շուտ դուրս գայ «թրքա-ժեխա-թալանչիական» միմիանց մեղադրելու լեքսիկոնից, գուցէ այդ ժամանակ նկատեն, թէ ինչպէս է եռում մեր տարա-

Շուճն էլ Սիրելի Գիտի...

Շարունակուած էջ 13-էն

շուրջն էինք, դիմեցի Արամին.

- Արամ, տղաս, նայիր, հաւանաբար այս օրերին բարեկամդ կը գայ Սենդիին տանելու, բայց մենք Սենդիին չենք տալու, ականջիդ օղարա, հասկացա՞ր...

Կարծես բոլորի սրտից էի խոսել: Նոյնը կրկնեցին թէ՛ մայրս, եւ թէ՛ Մարիետան:

- Արդէն ընտանիքի անդամ է դարձել Սենդին, մենք չենք կարող բաժանուել նրանից, յարեց Մարիետան: Իսկապէս էլ, Սենդին դարձել էր յոյժ անհրաժեշտութիւն մեր տան մէջ: Առանց նրա անկարելի էր երեւակայել մեր կեանքը, մանաւանդ մայրիկիս կեանքը: Իր ընկերն էր Սենդին, խօսակիցը: Ամբողջ ցերեկը նրա հետ էր, միայն երեկոներն էր վերապահուած մեզ, իսկ գիշերները միայն իմն էր, անկողնուս վրայ, ոտքերիս տակ էր քնում: Մի օր Արամն ասաց, որ ընկերը գալու է շանը տանելու: Ամենքս մեր որոշումը տուել էինք արդէն, նոյնիսկ առանց իրար հետ խորհրդակցելու, ի՞նչ, Սենդիին տանելու են, անկարելի է...

Մի քանի օր յետոյ տղան երեւաց մեր բակում: Իր նախկին տիրոջը տեսնելուն պէս, Սենդին վազեց դէպի նա: Տղան գիրկն առաւ շնիկին եւ համբոյրներով ողորեց շուարուն կենդանուն: Վերջինս տիրոջ գրկից իջնելուց յետոյ, չէր իմանում անելիքը, մէկ ինձ մօտ էր գալիս, մէկ՝ մայրիկիս, մէկ Արամին:

- Տղաս, Դու Սենդիին Չես կարող տանել, նախապարձակ ոճով ասացի ես:

- Ինչպէ՞ս...

- Ժիշդ այդպէս, դու գրեթէ վեց ամիս Սենդիին թողեցիր մեզ մօտ եւ մենք վարժուեցինք նրան եւ առանց նրա չենք կարող պատկերացնել մեր կեանքը, ու մեր իրաւունքն է այսուհետ նրան պահել մեր տան մէջ, որպէս լիիրաւ անդամի:

- Ո՛չ, ո՛չ, չենք կարող տալ, աւելացրեց Մարիետան:

- Ի՞նչպէս կարելի է, ես առանց Սենդիի չեմ կարող ապրել, դուք

ծաշրջանը, ինչ գործընթացներ են մեր շուրջը, որոնց նոյնիսկ 10 տոկոսին Փաշինեանի իշխանութիւնը ուշադրութիւն չի դարձնում, գուցէ՛ չի էլ ընկալում: Իսկ այսօր հայաստանեան քաղաքական

գիտէ՞ք, թէ ինչ խելացի շուն է նա, ասաց խեղճացած երիտասարդն ու սկսեց հեկեկալ.

Երիտասարդի հեկեկոցը խախտեց նաեւ մեր հավասարակշռութիւնը եւ՝ կարծես ձենձենի տուած, մենք էլ սկսեցինք լաց լինել: Մթնոլորտը խաղաղ վիճակի բերելու մտահոգութեամբ, սկսեցի իմ «ճառը».

- Ինձ լսիր, տղաս, ճիշդ է, այս շունը, որին նույնիսկ դժուարանում եմ շուն անուանել, ինձ համար համր մարդ է, խելքը տեղին եւ աւելի հաւատարիմ, քան շատ յաճախ մարդը մարդուն: Քոնն է Սենդին, բարեկամս, այո, բայց մի քիչ էլ մերն է եւ մենք վարժուեցինք նրան ու նա էլ մեզ: Կէս տարի նա մեզ հետ է, որպէս մեր բազմանդամ ընտանիքի հարազատ անդամ: Որքան որ գիտեմ, մենակ տղայ ես, դու պիտի աշխատես կամ ուսանես, ո՞վ է հոգ տանելու Սենդիին, մտածե՞լ ես այս մասին: Այս վեց ամսում 2 անգամ 23 օր հիվանդանոցում է եղել, դու կարո՞ղ ես այդքան ժամանակ ու նիւթական տրամադրել նրա համար: Այնպէս որ, տղաս, դու Սենդիին թող մեզ մօտ եւ երբ ցանկանաս, կարող ես գալ ու սիրել շունիկիդ:

Տղան, իհարկէ դժուարութեամբ, համաձայնուեց եւ արցունքով ողորուն համբոյրներ դրոշմեց շան քթին, բերնին ու առանց մի բառ ասելու, հեռացաւ:

Դրանից յետոյ միայն երեք տարի կարողացանք վայելել Սենդիին: Մայրիկիս մահուան օրը, 1993 թուականի Նոյեմբերի 23ին Սենդին անյայտացաւ տնից: Ամենուր փնտրեցինք, ամբողջ Հոլիվուդը տակնուվրայ արեցինք, ոստիկանութեանը լուր տուինք, բայց՝ անօգուտ:

Փորձառու մարդիկ ասում են, որ երբ տանը մէկը մահանում է, շները չեն դիմանում այդ ցաւին եւ գնում, մի ծածուկ տեղ, աչքից հեռու աւանդում են հոգին: Թէրեւս այդպէս եղաւ մեր Սենդիի պարագայում: Ո՞վ գիտի, գուցէ ճիշդ է թէ շներն էլ մարդկանց նման սիրելի գիտեն:

Սովորելու բան ունենք նրանցից, հը՞... թերեւս...

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :-----
Email: -----

Ամեն Ինչ Կորսնցուցի՞՞նք

Շարունակուած էջ 14-էն

նաեւ աշխարհատարած սփիւռքահայուն: Որպէս հայ ժողովուրդ երբ այսօր կորսնցուցինք հողհողատարածք, այս կը նշանակէ թէ կորսնցուցինք մեր կեանքերուն մէջ եւ անոր համար Արժէքը: Բայց արդիօք ամէն ինչ կորսնցուցի՞նք:

Իւրաքանչիւր Հայաստան ալցելուծեան միշտ ալ առիթը ունեցած եմ հարց տալու հայրենակիցներու սովետական Հայաստանի ժամանակաշրջանին մասին: Ընդհանրապէս ստացած եմ հետեւեալ միանշանակ պատասխանները. «Սովետի օրերը ունէին իրենց բլուսները եւ միտումները»:

Եթէ քննական եւ առարկայական մօտեցումով ուզենք վեր առնել երրորդ հանրապետութեան եւ անոր երեսուն տարիներու իրավիճակը, պէտք է հարց տալ. «Ո՞րքան կրցանք պահել եւ շինել պետականութիւնը որ ժառանգեցինք սովետական համակարգէն»: Երեւի շատ յաջողութիւններ չկրցանք ձեռք բերել պետականաշինութեան մէջ: Այս ունէր-ունի իր արտաքին բայց նոյնքան ազդեցիկ կերպով ներքին տուեալներ:

Շահան Գանտահարեան՝ Պէյրութի «Ազդակ» օրաթերթի պատասխանատու տնօրէն եւ խմբագիր, իր 18 դեկտեմբերի 2020ի խմբագրականի մէջ կը գրէ. «Ստեփանակերտը ազդարարեց արմատական փոփոխութիւններու մեկնակէտերը»՝ շատ դիպուկակերպով կը յիշատակէ մը յետպատերազմի Արցախի իրողական վիճակին մասին: «Հիմա արդէն ունինք այն ինչ որ ունինք»:

«Այն ինչ որ ունինք»:

Այս իրավիճակէն մեկնելով արժէք ծրագրել եւ կազմակերպել մեր պետական ռազմավարութեան արտաքին եւ ներքին լծակները: Արցախի պարագային այդ պիտի նշանակէ երեք հազար քառակուսի քիլոմետր հողային տարածք իր հարիւր յիսուն հազար բնակչութեամբ: Հայաստանի համար՝ իր մօտաւորապէս երեսուն հազար քառակուսի քիլոմետր հողային տարածքի ամբողջութեամբ եւ մօտաւորապէս երեք միլիոն բնակչութեամբ: Ու տակաւին Սփիւռքը իր երեւի եօթը միլիոն մարդկային ներուժով եւ պահանջատիրութեամբ:

Ամէն ինչ կորսնցուցի՞նք: Ո՞չ:

Այսօր ունինք Արցախի ներկայ տարածքը: Այս ունինք որովհետեւ կայ հինգ հազար հայ նահատակ տղոց արիւնը: Այն արիւնը որ պահեց հայուն այս հողը, որպէսզի հայը շարունակէ պահել իր Արժէքը: Այսօր այս գերագոյն գոհողութիւնը չենք կորսնցուցած: Ու տակաւին երեք հազար քառակուսի քիլոմետր տարածութիւնը պիտի պահել ու գալն ընդարձակել՝ հասնելու համար գէթ Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի տարածութեան եւ աւելին: Ու տակաւին հարիւր յիսուն հազար Արցախի ներկայ բնակչութիւնը վերաբնակեցնելու երեք հազար քառակուսի քիլոմետր տարածութեան մէջ անհնար բան չէ: Պիտի գիտակցել, թէ երեք

հազար քառակուսի քիլոմետր տարածութեան մէջ կրնանք հիմնել եւ ծաղկեցնել պետականութիւն, վերատիրանալ կորսնցուցած տարածքները, երաշխաւորել կեանքի ապահովութիւն եւ ձգտիլ միջազգային ճանաչումի եւ անկախութեան:

Հայաստանը պիտի անդրադառնայ, թէ իր հանրապետութեան սահմանները «կարմիր գիծ» են եւ թէ անհրաժեշտ գրաւական է գանոնք պահել: Այս բոլորը պահելու համար պիտի գիտակցինք, թէ պէտք է վերաշինենք պետականութիւն՝ տարբեր ենթակառուցներով: Պետականութիւնը եթէ բանակն է ու գիտութեան ուժը որպէս ազգային անվտանգութեան երաշխիք, բայց նաեւ դիւանագիտական կաճառ, տնտեսութիւն, ընկերային կեանք եւ աւելին: Հայաստանը կրնայ ամրապնդել իր երկրի ռազմական, դիւանագիտական եւ մտայնաբան կարողականութիւնները՝ պաշտպանելու համար իր գոյգ հայրենիքները եւ հայուն իրաւունքը:

Այս բոլորը յաջողցնելու համար հայը պէտք ունի համերաշխութեան:

Համերաշխութիւնը հիմքն է պետականաշինութեան: Համերաշխութիւնը կրնայ սկսիլ երբ կը բարելաւենք մեր տեղեկատուութեան աշխարհի (ներառեալ դիմատետրի) ու անոր տարբեր բնագավառներու ոճը, լեզուն եւ հոգին: Համերաշխութիւնը պիտի սկսի ներքին կարգով՝ հասնելու համար արտաքինին: Արտաքին ճակատի վրայ եթէ պիտի զօրացնել մեր ռազմական ուժը որպէս ազգային անվտանգութեան յենարան, պիտի զօրացնենք նաեւ մեր դիւանագիտութիւնը: Մեր պահանջատիրութիւնը եւ իրաւունքներուն պահպանումը եւ պաշտպանութիւնը մեր դիւանագիտական ռազմավարութեամբ պիտի ըլլայ:

Փրանսացի հեղինակը տեսալից Հայաստան կը մեռնի: Բայց ան նոյնքան տեսալ եւ հաւատաց թէ հայը պիտի ապրի, որովհետեւ ան կը գիտակցի, թէ հայը ունի քիչ մը արիւն որ արժէքաւոր է: Այս արիւնը պիտի ստեղծէ նոր հերոս սերունդներ, որոնք չեն ուզեր եւ չեն մեռնիր:

Հայը կորսնցուց հազարաւոր երիտասարդներ եւ հողատարածք: Բայց ամէն ինչ չկորսնցուց: Այն ինչ որ ունի եթէ ներկայ հողատարածքն է բայց նաեւ քիչ մը արիւնը: Արիւնը որ արժէք է եւ որ հայուն պիտի տայ հերոսական նոր կեանք: Այս արիւնը մեր հինգ հազար տղոցն է, որ խառնուած է իւրաքանչիւր հայու արեան հետ եւ միասին պիտի կերտենք նոր կեանք:

Ուր կամք կայ հոն կայ ելք: Հայուն կամքը ու անոր շնորհած ելքը կը կայանան երբ պարտինք այսօրուայ մեր ունեցածը խարսխել ամուր պետականութեամբ: Ամուր պետականութիւն մը որ հայուն պիտի տայ նոր կեանք: Այս այն նոր կեանքն է որ պէտք է պահենք, կերտենք, շինենք եւ վերաշինենք: Եւ որ երբեք չկորսնցնենք:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՃՈՐՃ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Էտի եւ Սարին Պոստոյեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկ. Լուսին Գալուստեանին եւ դուստրերուն: Առ այդ \$250 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Լիբանանի Հ.Մ.Մ.ի ֆութպոլի Ա. խումբի լաւագոյն խաղացողներէն ԿիթԼԱՊԻ ՃԱՆՃԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Լոս Անձելըսի Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ Հ.Մ.Մ.ի մեծ ընտանիքին:

Գործակցութեան Հրաշալի Օրինակ

Շարունակուած էջ 16-էն

բաթ մը առաջ 3-րդ դասարանը հաւաքեց հագուստեղէն եւ 12 մեծ տուփ դրկեցինք Հայաստան եւ Արցախ:

Կապուեցանք լրագրող Արաքսեայ Կարապետեանին հետ. անոր Instagram live-ին միջոցով այդ երեկոյ շուրջ 20 հոգի դիմեց մեզի՝ դառնալու հովանաւոր: Ինչո՞ւ. որովհետեւ ուղղակի հովանաւորութիւն է մեր առաջարկածը: Մենք կը ծանօթացնենք, կը կապենք երկու կողմերը իրարու եւ անոնք գումարը ուղղակի կը դրկեն, կը մտերմանան:

Մինչեւ հիմա, մէկ ամսուան մէջ, «Արցախ Նուէր» ծրագիրին միջոցով 60-է աւելի սփիւռքահայ ընտանիքներ ապահովեցինք, որոնց

միջոցներով:

Ինչպէ՞ս հովանաւոր դառնալ, կը հարցնեմ ես:

Հ. Խեչումեան. Ունինք երկու տարբերակ. ընտանիք մը, որ չորս հոգի է կը բաղկանայ՝ հարիւր տոլար է ամսական հովանաւորչութիւնը, եւ երբ թիւով աւելի մեծ ընտանիք է՝ 150: Սակայն, մտերմութեան հետ նուէրներու քանակն ալ կ'աւելնայ: Հետաքրքրական է, որ աշակերտները անընդհատ կը մտածեն նոր գաղափարներու մասին՝ օգնելու համար Արցախին:

Մ. Էլեան. Այո, այդ ցանկութիւնը հետզհետէ կը մեծնայ: Եւ կը մտածենք, թէ ի՞նչ պիտի ըլլայ մեր յաջորդ ծրագիրը, որովհետեւ «Արցախ Նուէրը» պէտք է ինքն իրեն հանգիստ շարունակուի:



60 տղոսը մեր դպրոցի երրորդ դասարանի ծնողներ են: Կապի մէջ են, կը հեռաձայնեն, կը գրեն: Հոն պատրաստուած պուպրիկ մը կը յանձնենք հոս՝ հովանաւոր ընտանիքին, շնորհակալագիրի մը հետ: Աշակերտները կը խենթենան, կը սիրեն եւ ամուր կապ մը ստեղծուած է անոնց միջեւ:

Մ. Էլեան. Վերադառնանք Դիլիջան: Պատերազմի օրերուն այնքան օգնութեան կարիքը կար, որ արդէն մեր ուժերէն վեր էր ամէն ինչ: Այդ օրերուն էր, երբ Հուրին ինծի հեռաձայնեց, տեղեկացնելով թէ ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի իր աշակերտները կը փափաքին ինչ որ ձեռով օգնութիւն փոխանցել արցախցիներուն:

Հ. Խեչումեան. Մեր աշակերտները կապուեցան հայրենիքի հետ, սիրահարուեցան, իրենց արիւնին մէջ մտաւ հայրենասիրութիւնը: Վերջապէս, վաղը իրենք է որ պիտի շարունակեն մեր գործը: Այս է գլխաւոր կէտը, որուն համար կ'ուզեմ յառաջ մղել այս ծրագիրը:

Մ. Էլեան. Սփիւռքի մէջ իւրաքանչիւր ընտանիք պէտք է մէկ ընտանիքի օգնէ: Պատասխանատուութիւն ստանձնէ: Մեր նպատակը այդ է: Քաջալերել, որպէսզի աւելի մեծ թիւով ընտանիքներ հոսկէ դառնան հովանաւորներ: Իսկ մենք մեր կարգին կ'օգնենք այլ

Հ. Խեչումեան. Ժամանակն է, որ արթնանք ազգովին, ալ կը բաւէ՛: Եւ ուր որ լաւ գործ մը կայ, այդ տեսնենք, գնահատենք, քաջալերենք:

Մ. Էլեան. Մենք պէտք է պետութեան եւ ժողովուրդին մէջ քիչ ըլլանք, թիկունք կանգնինք: Դրական տեսնենք եւ գրենք, տարածենք այդ մասին:

Զրոյցի աւարտին, Տիկ. Խեչումեան ջերմօրէն շնորհակալութիւն յայտնեց վարժարանի տնօրէնուհի՝ Տիկ. Արփի Աւանեսեանին, որ առաջին իսկ օրէն նեցուկ կանգնեցաւ եւ օրինական բոլոր միջոցները ապահովեց, որպէսզի գումարները կանոնաւորաբար ուղարկուին Հայաստան: Իր հերթին, Տիկ. Էլեան բարձրօրէն գնահատեց Հայաստանի իրենց գործընկերներ Վրոյր Խաչատրեանն ու Գայիանէ Պետրոսեանը, անոնց ուղղելով շնորհակալական ջերմ խօսքեր:

Կեցցէ՛ք տիկին Էլեան, տիկին Խեչումեան եւ Լոս Անձելըսի ՀԲԸՄ-ի Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի 3-րդ կարգի աշակերտներ: Շա՛տ ապրիք:

Ընթերցող բարեկամ, այցելէ՛ www.Artsakhsnvehr.org կայք եւ ամիսը 100 կամ 150 տոլարով հովանաւոր ընտանիք մը Արցախի մէջ, ուղղակի կապ հաստատելով անոր հետ:

Զրուցեց՝ ՀՐԱԶ ՍԵՓԵԹՃԵԱՆ

«Մանչեսթր Եունայթդ» Յաղթեց «Մանչեսթր Սիթիին»



Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 27-րդ հանգրուանի կեդրոնական խաղին մրցեցան Մանչեսթըր քաղաքը ներկայացնող երկու խումբերը: «Մանչեսթըր Սիթին» սեփական դաշտին վրայ ընդունեց «Մանչեսթըր Եունայթըրտին»: «Կարմիր սատանաները» յաջողութեամբ երկու անպատասխան գնդակ ուղարկել «քաղաքայիններու» դարպասը՝ սեփականը պահելով անառիկ: «Մանչեսթըր Եունայթըրտի» կազմին մէջ փայլեցան Պրոուսո Ֆերնանտեսը եւ Լիուկ Շոուն:

Հակառակ այս պարտութեան «Մանչեսթըր Սիթին» կը մնայ բարձրագոյն լիգայի առաջատարը՝ 65 կէտով: «Մանչեսթըր Եունայթըրտ» երկրորդն է եւ ունի 54 կէտով:

«Լիւերփուլ» Կը Շարունակէ Պարտութիւններու Շարքը

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 27-րդ հանգրուանին գործող ախոյեան «Լիւերփուլ», սեփական յարկի տակ ընդունած էր «Ֆուլհեմին»: Եւրոգէն Կլոպի գլխավորած խումբը կը շարունակէ անյաջող խաղերու շարքը եւ այս անգամ եւս պարտութիւն կրեց: «Ֆուլհեմ» առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով: Միակ եւ յաղթական կտրը 45-րդ վայրկեանին նշանակեց Լեմինան:

Վերջին 11 խաղերու ընթացքին ընդհանուր առմամբ սա «Լիւերփուլ» 7-րդ պարտութիւնն է այս:

Անգլիական լիգայի մրցաշարային աղիւսակին Կլոպի խումբը 7-րդն է 43 միաւորով: Առաջատարը 65 միաւորով «Մանչեսթըր Սիթին» է:

«Ռեալը» Եւ «Աթլետիքոն» Խուսափեցան Պարտութենէն

Սպանիոյ ֆուտբոլի առաջնութեան 26-րդ հանգրուանին կեդրոնական խաղին մրցեցան «Աթլետիքոն» եւ «Ռեալը»:

«Արմենիերեսի» հաղորդմամբ՝ մատրիտեան երկու խումբերու պայքարը աւարտած է ոչ-ոքի՝ 1:1 հաշուով: Առաջինը խաղի հաշիւը 15-րդ վայրկեանին բացաւ «Աթլետիկոյի» ֆուտբոլիստներէն Լուիս Սուարեսը: «Արքայական ակումբէն» կտրի հեղինակ դարձաւ Քարիմ Պենզեման՝ խաղաւարտին մօտ՝ 88-րդ վայրկեանին:

Այս հանգրուանի աւարտին «Ռեալ» Լա Լիգայի մրցաշարային աղիւսակին վրայ 3-րդն է եւ ունի 54 կէտ: Երկրորդը դիրքի վրայ՝ 56 կէտով «Պարսելոնան» է, իսկ առաջատարը 59 միաւորով «Աթլետիքոն» է:

«Պարսելոնան» Արտագնայ Յաղթանակ Տարաւ

Ֆուտբոլի Սպանիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին գաթալոնական «Պարսելոնան» 2:0 հաշուով արտագնայ յաղթանակի հասաւ «Օսասունայի» նկատմամբ: Գատալոնական ակումբէն աչքի ինկան սպանացի պաշտպան Ժորտի Ալպան ու փոխարինման դուրս եկած 18-ամեայ կիսապաշտպան Իլյաչ Մորիպան, որ իր առաջին կտրը նշանակեց Լա Լիգայի մէջ:

«Պարսելոնան» 26 խաղէն յետոյ 56 կէտով կը գրաւէ երկրորդ տեղը եւ 2 միաւոր ետ է երկու մրցում նուազ խաղցած՝ առաջատար Մատրիտի «Աթլետիքոն»:

«Ռոման» Նուազագոյն Արդիւնքով Յաղթեց «Գենոային»

Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան 26-րդ հանգրուանին «Ռոման» հիւրընկալած էր «Ճենոային» եւ յաղթանակ արձանագրեց նուազագոյն արդիւնքով:

Հոռմի Օլիմպիական մարզադաշտին վրայ կայացած խաղին միայն մէկ անգամ բերդի գրաւում արձանագրուեցաւ: Զանլուկա Մանչինիի 24-րդ վայրկեանին նշանակած կտրը յաղթական էր «Ռոմայի» համար:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի խաղցող Հենրիի Միլիթարեան «Ռոմայի» հիմնական կազմին մէջ չէր, սակայն փոխարինման դուրս եկաւ 60-րդ վայրկեանին:

Այս հանգրուանէն յետոյ «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ 4-րդն է եւ ունի 50 կէտ:

Ֆերդինանդ Կարապետեանը Բարելաւեց Իր Դիրքերը Օլիմպիական Վարկանիշային Ցուցակին Վրայ

Ճիւտօրիստ ֆերդինանդ Կարապետեանը Մարտի 5-7-ը Թաշքենտի մէջ ընթացող Մեծ Սաղաւարտի խաղարկութեան ընթացքին գրաւեց երրորդ տեղը: Մրցաշարի արդիւնքներով Կարապետեան նաեւ համաշխարհային դասակարգման 500 միաւոր վաստակեցաւ: Այդ 28-ամեայ Ճիւտօրիստին թոյլ տուաւ օլիմպիական վարկանիշային դասակարգման ցուցակին մէջ 9 տեղով բարելաւելու դիրքը:

Թաշքենտի մէջ ունեցած յաջող ելուցիւն շնորհիւ Կարապետեանի՝ օլիմպիական ուղեգիր ձեռք ձգելու առիթները նկատելիօրէն մեծցան, ու եւս մի քանի նման ելուցիւններուն հայ մարզիկը կը կարողանայ ուղեգիր նուաճել: Այժմ Կարապետեանը կը պատրաստուի մասնակցելու Մարտի 26-28-ը Թբիլիսու մ կայանալիք Մեծ Սաղաւարտի հերթական մրցաշարին:



Հիմա Եւրոպայի Առաջնութեան 5-րդն Եմ, Բայց Գիտեմ՝ Կարող Եմ Աւելին Աթլետ Լեւոն Աղասեան

Հայաստանի աթլետիքի ազգային խումբի անդամ Լեւոն Աղասեանը Եւրոպայի ձմեռային առաջնութեան գրաւած է 5-րդ տեղը: Եւրոպայի ձմեռային առաջնութեան տղամարդկանց եռացատկում Կապանը ներկայացնող Լեւոն Աղասեանը ցատկած է 16.77 մեթր եւ գրաւած է 5-րդ տեղը: Առաջին տեղը Փորտուգալիան ներկայացնող Պի Պիչարդն է, որ արձանագրած է 17.30 արդիւնք: Եւրոպայի ձմեռային առաջնութեան Հայաստանը ունէր երկու ներկայացուցիչ՝ Լեւոն Աղասեանը եւ վազորդ Ալեքս Դոնիկեանը:



Թոքիոյի Խաղերու Կրկին Յետաձգումը Բացառուած Է

Թոքիոյի ամառային Օլիմպիական խաղերու կրկին յետաձգումը անհնար է եւ քննարկման տակ չէ: Այս մասին յայտարարած է «Թոքիո-20»-ի կազմկոմիտէի գլխավոր քարտուղար Տոսիթո Մուտոն ձափոնական Kyodo գործակալութեան տուած հարցազրոյցի ընթացքին, կը տեղեկացնէ «Արմենիերեսը»:

«Կան մարզիկ, որոնք կ'ըսեն են, թէ Խաղերը հարկաւոր է կրկին յետաձգել, բայց, իմ տեսակէտով, այդ պարզապէս անհնար է: Խաղերու կայացումը Յուլիսին վերջին հնարաւոր տարբերակն է», - ըսած է Մուտոն: Տարուայ սկզբին համանման դիրքորոշում յայտնած է նաեւ Միջազգային օլիմպիական կոմիտէի (ՄՕԿ) նախագահ Թոմաս Պախը:

Բազմաթիւ հարցումներու տուեալներով, որոնք կատարուած են վերջին ամիսներուն, ձափոնի բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը հանդէս եկած է այս ամրան Թոքիոյի մէջ Օլիմպիական խաղերու անցկացման դէմ՝ համաճարակի տարածման հետ կապուած իրադրութեան պատճառով:

Զլատան Իպրահիմովիչ Նորէն Հանդէս Պիտի Գայ Շուէտի Հաւաքականէն Ներս

Իտալական «Միլանի» յարձակող Զլատան Իպրահիմովիչ կրնայ կրկին վերադառնալ Շուէտի ազգային խումբը: «Արմենիերեսի» հաղորդումամբ՝ յարձակողը հրաւեր ստացած է ազգային խումբէն Աշխարհի Բաժակի յառաջիկայ որակաւորման փուլի խաղերուն մասնակցելու համար: Մարտին Շուէտ ընտրական փուլի առաջին խաղին կը մրցի Վրաստանի հետ:

39-ամեայ Իպրահիմովիչ իր ելուցիւնները ազգային խումբի կազմին ներս աւարտած էր 2016 թուականին: Ան այս մրցաշրջանին մեծ արդիւնաւետութեամբ հանդէս կու գայ «Միլանի» կազմէն ներս, ուր արդէն 6 խաղի ընթացքին նշանակած է 10 կոլ:

Շուէտի ազգային հաւաքականէն ներս Իպրահիմովիչ մասնակցած է 116 խաղի՝ դառնալով 62 կոլի հեղինակ: Ան Շուէտի բոլոր ժամանակներու լաւագոյն ումբարկուն է:

